



Փ Ա Ր Ո Մ *Paros*

ISSUE 96 JULY / ԹԻԻ 96 ՅՈՒԼԻՍ 2025

NEWSLETTER OF THE DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AUSTRALIA & NEW ZEALAND

Թեմական Լուրեր

Շբ., 5 Յուլիս – Նախագահությամբ Գերաշնորհ Տեղ. Վարդան Եպս. Նաւասարդեանի, Ս. Յարութին Եկեղեցւոյ Երիտասարդաց միութեան նախաձեռնութեամբ եւ մասնակցութեամբ գոհացուցիչ թիւով Հայ երիտասարդներու, մատուցուեցաւ երիտասարդական պատարագ նուիրուած Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի մատուցմունքներուն:

Յաւարտ Պատարագի, Սրբազան Հայրը ընդունեց երիտասարդները Առաջնորդարանի սրահին մէջ, ուր տեղի ունեցաւ

աղօթք եւ կարծիքներու փոխանակում մեր արմատներուն, մեր եկեղեցւոյ եւ հաւատացեալ երիտասարդութեան մասին:



Կիր., 6 Յուլիս – Կազմակերպութեամբ Համազգայինի Գրական-Գեղարուեստական Յանձնախումբին, Էտկարեան սրահին մէջ տեղի ունեցաւ գրական երեկոյ մը նուիրուած անգուգական բանաստեղծ Յովհաննէս Շիրազին, «Մեր Շիրազ»ին, ինչպէս զինք անուանած եւ ընդունած է Հայ ժողովուրդը:

Առաջնորդ Սրբազան հայրը՝ Գերաշնորհ Տեղ. Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան, ընդառաջելով Համազգայինի հրաւերին, մասնակից էր ձեռնարկին: Սրբազան հայրը երկու տասնամեակ առաջ փորձառութիւն ունի այս յանձնախումբին հետ աշխատակցելու, ինչպէս նշեց օրուան հանդիսավարուիին եւ Յանձնախումբի ատենապետուիին՝ Տիկին Լիլիկ Կոտոյեանը: Սրբազան հօր, այն օրերու Հայր Վարդանի աջակցութեամբ, նոյն յանձնախումբը կազմակերպած էր այլ գրական երեկոյ՝ նուիրուած Կոմիտասին: Տիկին Կոտոյեան անդրադարձաւ այն իրողութեան որ Շիրազ բնաւ արտասահման չէր արտօնուած ըլլալ սակայն Սփիւռքը զինք աւելի ճանչցած էր եւ գնահատած քան Հայրենիքը, որ այդ օրերուն սովեւ էր:

Նախքան օրուան բանախօս Արժ Տէր Միւռն Քահանայ Աւետիսեանը բեմ հրաւիրելը, Տիկին Կոտոյեան հրաւիրեց բոլոր անոնք որոնք Շիրազի բանաստեղծութիւններէն կը փափաքէին արտասանել կամ



ընթերցել: Եւ բաւական թիւով գրասէրներ ամպիոն բարձրանալով Շիրազ ընթերցեցին եւ արտասանեցին, իսկական գրական երեկոյի մթնոլորտ ստեղծելով: Այսպէս՝ Միլվա Փամպուքեան արտասանեց «Կնոջ սիրտը» – Նանոր Զիւրիքեան ներկայացուց, բանաստեղծական ոճով գրուած, Շիրազի առակներէն «Աղուէսն ու Ոգնին» եւ «Օձն ու Մեղուն», Շուշան Տէր Սահակեան՝ «Իմ Սուրբ Հայրենիք», Բոմելա Յակոբեան՝ «Մասիսն ի Վեր», Ազնիւ Ինկիլիզեան՝ «Հայոց Լեզուն», Գեղանուշ Մարտոյեան՝ «Իմ Մանկութիւնը», Միւզի Սարաֆեան՝ «Կտակ», Վարդենի Խոստեցեան՝ «Կ'ուզէի Նստել Մի Քարի Վրայ», Կարինէ Սայադեան՝ «Միակ Քոյրս Էի Կորցրել», Զարինէ Խորէնեան՝ «Ղարաբաղի Կանչը», Շուշան Պօղոսեան՝ «Երազիս Մէջ»:



Շիրազի կեանքին մասին ամփոփ պատկեր մը տեսերիզով ներկայացնելէ ետք, Տէր Միւռն վեր հանեց անվախ ու յանդուգն Շիրազի արժէքը, որպէս մարդ եւ որպէս Հայ: Տէր հայրը տարբեր բանաստեղծական նմուշներով հանդիսատեսին համար յստակ դարձուց Շիրազի բանաստեղծական տարբեր ոճերը, արձակն ու նամականին, եւ բոլոր գրութեանց մէջ տեսաւ բանաստեղծին հայապահպանման խիզախ պաշտպանի



հանգամանքը: Շիրազի անբիծ սէրը մօր եւ մայր հայրենիքի նկատմամբ՝ կարմիր թելի նման կ'երեւին անոր գրականութեան մէջ: Տէր հայրը բազմակողմանի ուսումնասիրութիւն կատարած էր Շիրազի մասին, պատմեց անոր կեանքի հետաքրքրական դրուագներէն, խօսեցաւ որ ան համոզուած էր թէ սովետական կարգերը օր մը Թուրքիոյն ետ պիտի բերէին Մասիսը: Տէր հայրը բացատրեց որ Շիրազի գրականութիւնը 60-է աւելի լեզուներու թարգմանուած էր: Անդրադարձաւ անոր որբութեան տարիներու զրկանքներուն, փոքր տարիքէն բանաստեղծութիւններ գրած ըլլալուն եւ անոր ունեցած համամարդկային արժէքին մասին: Դասախօսութեան ընթացքին Տէր Միւռն երգեց Շիրազի «Երգ Գինու Մասին (Մի թասը լաւ է...)» եւ «Ամպեց Կորաւ Լուսնկան» երգերը, խանդավառելով ներկաները, որոնք միացան եւ կազմեցին չնախատեսուած երգչախումբ: Տէր հօր դասախօսութիւնը արժանացաւ որոտընդոստ ծափահարութեան, որը գնահատանքի արտայայտութիւն էր Շիրազը ամբողջական ներկայացնելու համար անոր տարած հոյակապ աշխատանքին:

Փակման խօսքը կատարեց Սրբազան հայրը: Ան շնորհակալութիւն յայտնեց Տէր հօր իր տարած «սիրտ հարստացնող» ուսումնասիրութեան եւ վերլուծումին համար,

որոնք կենդանացուցին Շիրազի կտակը ձօնուած երկու կարեւոր արժէքներու՝ Մօր եւ Մայր Հայրենիքին: Խորանալով՝ Սրբազան հայրը ըսաւ. «այս երկու արժէքները կենդանի են մարդուն մէջ տարիքային բոլոր հանգրուաններուն: Մեր ֆիզիքապէս կորսնցուցած մայրերէն յաճախ կը ստանանք խրատ եւ կը վայելենք իրենց անփոխարինելի ներկայութիւնը»:



Սրբազանը անդրադարձաւ նաեւ այն տխուր իրողութեան, որ մեր մէջ նուազում սկսած է արձանագրել մայր հայրենիքի հոգեւոր ընկալումը, գուցէ տկարացած է սերունդներուն ճիշդ արժէքներ փոխանցելու մեր ունակութիւնը: Ան խորհրդածեց ըսելով որ Հայրենիքի կորուստի հետ առնչուած ընդվզող չենք այլ միայն խօսող: Հետեւաբար ան կարեւոր գտաւ այսպիսի երեկոներու յաճախակի կազմակերպումը «որպէսզի մեր մէջ վերանորոգուի ազգային կապուածութիւնը մեր երկրորդ ծնողքին՝ Հայրենիքին»:

Սրբազանը պատգամեց Շիրազի այն պատգամը, որ Հայաստան եւ Սփիւք պէտք է ոսկի կամուրջով միացնել իրարու: Իսկ ըստ Սրբազանին, «ոսկիէ այդ կամուրջը այն ոսկի հայերն են որոնք բանական կամուրջ են» Հայ երկու հատուածներուն միջեւ: Ան մաղթեց հոգեւոր զենքով եւ միասնական յաղթանակ տանելու միտումով դէմ կենալ բոլոր մարտահրաւերներուն:

Իմաստալից եւ հայրենասիրութիւն ներշնչող այս խօսքերով եւ Պահպանիչով փակուեցաւ հանդիսութիւնը:

Դժ., 9 Յուլիս – Գերշ. Տէր Վարդան Եպս. Նաւասարդեան Առաջնորդ Հայրը, ընկերակցութեամբ Թեմական Խորհուրդի Ատենապետ Տիար Սարգիս Տէր-Պետրոսեանի, Արժ. Տէր Աշոտ Քհնյ. Աբրահամեանի եւ Բրշ. Պօղոս Սրկ. Քէլէշեանի, այցելեց Սիսնիի Ալեքսանտր Հայ Հանգստեան Տուն: Խումբը դիմաւորուեցաւ ազգային հաստատութեան խնամակալ մարմնի անդամներուն եւ անձնակազմին կողմէ: Սրբազան Հայրը հոգեւոր պատգամ փոխանցեց մեծահասակներուն եւ յատուկ արարողութեան աւարտին, Տէր Հօր ձեռամբ Սուրբ Հաղորդութիւն բաշխուեցաւ ներկաներուն: Ապա շրջայց տեղի ունեցաւ նոր մասնաշէնքին մէջ, ինչպէս նաեւ անհատական այցեր՝ առանձինն ծերերուն: Աւարտին, խնամակալութիւնը յատուկ հիւրասիրութեամբ պատուեց Առաջնորդ Սրբազանը իր անդրանիկ այցին առիթով: Սրբազան Հայրն ու Թեմականի Ատենապետը խնամակալութեան հետ միասին խորհրդակցեցան ազգային սոյն հաստատութեան առաւել զարգացման հեռանկարին մասին:



Դժ., 9 Յուլիս – Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի հայոց թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Վարդան Եպս. Նաւասարդեան նախագահեց Սիսնիի Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ երիտասարդական աղօթքին եւ Սուրբ Գրքի սերտողութեան:

Շաբաթ 12 Յուլիս – Երեկոյեան, Սրբազան Հայրը հովանաւորեց Արարատ Մշակութային Կեդրոնի կազմակերպած Christmas in July աւանդական ձեռնարկը ի ներկայութեան մօտ 100 հանդիսականներու: Արարատ Կեդրոնի Տիկնանց Օժանդակ Յանձնախումբի անդամուհիները բժախնդրօրէն նկատի առած էին իւրաքանչիւր մանրամասնութիւն որպէսզի երեկոն դառնար յատուկ: Իրօք՝ ձեռնարկը եզակի էր:

Սրբազան հայրը իր գոհունակությունը յայտնեց կազմակերպիչներուն ինչպէս նաեւ Արարատ Կեդրոնի բոլոր բարեկամներուն, որոնք իրենց ներկայութեամբ քաջալերեցին եւ սատար հանդիսացան ձեռնարկին յաջողութեան:
Փարոսի խմբագրութիւնը կը շնորհաւորէ Արարատ Կեդրոնի Յանձնախումբը, ի մասնաւորի՝ Տիկնանց Օժանդակ Յանձնախումբը այս ձեռնարկի յաջողութեան համար:

Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Սրբազան Հայրը շարունակաբար ընդունեց Համայնքային կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:



Այսպէս, **Շաբաթ 12 Յուլիսի** կէսօրին, ան ընդունեց ՀՕՄ-ի Շրջանային Վարչութեան նորընտիր կազմը գլխաւորութեամբ Տիկին Նինա Գաբրիէլեանի: Խումբին կ'ընկերանար նաեւ ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան անդամուհի, Սիտնիէն՝ Տիկին Նորա Մեւակեան:

Կիրակի 13 Յուլիսի կէսօրէ ետք, Սրբազան Հայրը ընդունեց ներկայացուցիչները Ռամկավար Ազատական Կուսակցութեան Աւստրալիոյ Վարիչ Մարմնին եւ Թեքեան Մշակութային Միութեան, ընկերակցութեամբ իրենց տիկիններուն, գլխաւորութեամբ ատենապետ Պրն Վահէ Արթինեանի:

Երկուշաբթի 14 Յուլիսի երեկոյեան, Սրբազան Հայրը ընդունեց ներկայացուցիչները Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Աւստրալիոյ Վարիչ Մարմնին, գլխաւորութեամբ ատենապետ Պրն Մեայուհ Գալփաքեանի:

Երեքշաբթի 15 Յուլիսի երեկոյեան, Սրբազան Հօր հիւրերն էին Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Աւստրալիոյ Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչները, գլխաւորութեամբ Ատենապետ Պրն Վիգէն Քորթեանի:

Չորեքշաբթի 16 Յուլիսի երեկոյեան Սրբազան հայրը ընդունեց ՀԲԸՄ Սիտնիի մասնաճիւղի վարչութեան ներկայացուցիչները գլխաւորութեամբ ատենապետ Պրն Միհրան Լէփեճեանի, ընկերակցութեամբ Ալեքսանտր Վարժարանի հոգաբարձութեան ատենապետին, Ալեք Մանուկեան Շաբաթօրեայ Վարժարանի տնօրէնին եւ Միութիւն ամսաթերթի գլխաւոր խմբագրին:





Հինգշաբթի 17 Յուլիսի կեսօրէ առաջ Սրբազանը ընդունեց Վերապատուելի Դոկտ Գրիգոր Եումուշաճքեանը, նախագահը եւ գործադիր տնօրէնը Աւստրալիոյ Հայ Աւետարանչական Ընկերակցութեան:

Բոլոր հանդիպումներուն ներկայ եղան քահանայ հայրեր եւ Թեմական Խորհուրդի ներկայացուցիչներ:

Ջերմ եւ սիրալիր մթնոլորտի մէջ քննարկուեցան տեղական թէ Հայրենիքը յուզող հարցեր, ինչպէս նաեւ համայնքային ապագայ ծրագիրներ:

Բոլոր հանդիպումներուն հիւրասիրութիւնը կատարեցին Առաջնորդարանի Տիկնանց Յանձնախումբի Տիկնայք:

Հինգշաբթի 24 Յուլիսի երեկոյեան, Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Սրբազան Հայրը ընդունեց Հայ Աւետարանական Համայնքի ներկայացուցիչները գլխավորութեամբ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Վերապատուելի Յակոբ Սարգիսեանի: Եղբայրական եւ համագործակցութեան ջերմ մթնոլորտի մէջ, Աւետարանական եկեղեցւոյ ներկայացուցիչները բարի գալուստ եւ բարի կեցութիւն մաղթեցին Սրբազան Հօր եւ յաջողութիւն իր ապագայ եկեղեցական եւ ազգային գործունէութեան:



Հիւրասիրութիւնը կազմակերպուեցաւ Առաջնորդարանի Տիկնանց Յանձնախումբին կողմէ:

Ուրբաթ 25 Յուլիսի կէսօրէ առաջ, Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Սրբազան Հայրը ընդունեց Աւստրալասիական Մերձատր Արեւելեան եկեղեցիներու (ԱՄԷՔ)



կազմակերպութեան ներկայացուցիչ եկեղեցապետերը յանձինս՝ Գերաշնորհ Տանիէլ Ղատի Ուղղափառ Եպիսկոպոսին, Սօր Մալաթիւս Մալքի Մալքի Ասորի Ուղղափառ Արքեպիսկոպոսին եւ Հայ Կաթողիկէ Համայնքապետ Գերյարգելի Բարսեղ Թագադիր Ծայրագոյն Վարդապետ Սուսանեանին: Եղբայրական ջերմ մթնոլորտի մէջ, Սրբազան հօր կողքին հիւրերը ընդունեցին նաեւ Արժանապատիւ Քահանայ Հայրեր՝ Տէր Նորայր Աւագ Քահանայ Բաթանեան, Տէր Պարթեւ Աւագ Քահանայ Գարագաշեան, Տէր Աւետիս Քահանայ

Համբարձումեան, Տէր Միւռոն Քահանայ Աւետիսեան եւ Տէր Աշոտ Քահանայ Արքահամեան, ինչպէս նաեւ Թեմական Խորհուրդի Ատենապետ Պրն Սարգիս Տէր Պետրոսեան: Ներկայացուցիչները բարի գալուստ եւ բարի կեցութիւն մաղթեցին Սրբազան Հօր եւ յաջողութիւն՝ իր ապագայ համայնքային եւ միջ-եկեղեցական գործունէութեանց: Տեղի ունեցաւ նուէրներու փոխանակում:

Հիւրասիրութենէն ետք, որ կազմակերպուած էր Առաջնորդարանի Տիկնանց Յանձնախումբին կողմէ, խումբը բարձրացաւ Սուրբ Յարութիւն Եկեղեցի, ուր տեղի ունեցաւ միասնական աղօթք, խնդրելով Բարձրեալէն խաղաղութիւն պարգեւել համայն աշխարհի, ի մասնաւորի՝ Մերձաւոր Արեւելքի երկիրներուն եւ Հայաստանին:

Հիւրերը բարձր տրամադրութեամբ մեկնեցան Առաջնորդարանէն:



Ուրբաթ 25 Յուլիսին, Աւստրալիոյ և Նոր Զելանտայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տէր Վարդան



Եպիսկոպոս Նաւասարդեան, ուղեկցութեամբ Թեմական Խորհուրդի Ատենադպիր Տիար Գեորգ Զափրագեանի, ժամանեց Միտնիի Արեւմտեան շրջանի Սուրբ Երրորդութիւն Եկեղեցի, ուր դիմաւորուեցաւ Հոգևոր հովիւ Արժանապատիւ Տէր Միւռոն Քահանայ Աւետիսեանի, Ծխական Խորհուրդին, Եկեղեցւոյ բոլոր մարմիններու անդամներուն կողմէն:

Հրաշափառի հանդիսաւոր մուտքով Եկեղեցի, բարի-գալստեան արարողութենէն ետք, Առաջնորդ Սրբազան Հայրը հանդիպում ունեցաւ Եկեղեցւոյ մարմիններու ներկայացուցիչներուն հետ, լսեց զանոնք և իր պատգամը փոխանցեց, ինչպէս նաև մասնակցեցաւ Ծխական Խորհրդի նիստին:

Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Պայծառակերպութեան եւ Վարդավառի տօներուն առիթով Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Սրբազան Հայրը իր անդարանիկ Սուրբ Պատարագը մատուցեց Արեւմտեան Միտնիի Սուրբ Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ, **Կիրակի 27 Յուլիսին**, ի ներկայութեան

բազմահարիր հաւատացեալներու: Խորանի վրայ Սրբազան Հօր սպասարկեցին Արժ Տէր Միւռն Քահանայ Աւետիսեանն ու սարկաւագաց ու դպրաց դասի անդամները: Սրբազանը յաւուր պատշաճի քարոզեց եւ իր հայրական պատգամը փոխանցեց հաւատացեալներուն:



Սրբազանը կատարեց նաեւ Սուրբ Երրորդութիւն Եկեղեցոյ նորընտիր Ծխական Խորհուրդի անդամներուն օրհնութիւնը եւ ընդունեց անոնց ծառայութեան ուխտը:

Ապա Սրբազան հայրը առաջնորդուեցաւ Պաթմանեան սրահ, ուր տեղի ունեցաւ Վարդավառի տօնախմբութիւն: Հիւրաբար ներկայ էր Փրոսփէքթի շրջանի խորհրդարանի ներկայացուցիչ, հայութեան բարկամ Դոկտ. Հիւ Մաք Տէրմոթ: Ի գործ դրուեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր: Տեղի ունեցաւ անդաստան եւ բերքի օրհնութիւն:

Մեր աւանդութեանց յիշատակման, ազգային հոգեւոր ոգիով գօտեպն-


դող հանդիսութիւն:

Բշ., 28 Յուլիս – Նոր Զելանտայի մէջ Հայաստանի Հանրապետութեան պատուոյ Հիւպատոս Տիար Յակոբ Կարապետ բարի գալուստ մաղթելու և շնորհաւորելու համար այցելեց հայոց Առաջնորդարան և հանդիպում ունեցաւ Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեանին հետ:

Հանդիպման ընթացքին, Սրբազան Հայրն ու Պատուոյ Հիւպատոսը անդրադարձան յառաջիկային Առաջնորդի Նոր Զելանտա այցին, հանդիպումներուն և կազմակերպուելիք միջոցառումներուն:



Բշ., 28 Յուլիսին Աւստրալիոյ և Նոր Զելանտայի թեմի հոգևորականաց կրօնական ժողովը, նախագահութեամբ Գերաշնորհ Տ. Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեանի տեղի ունեցաւ առցանց: Ժողովին կը մասնակցէին թեմի բոլոր օժեպ հոգևորականները: Ժողովի ընթացքին քննարկուեցան թեմական կեանքի կազմակերպչական յստակեցման և ներքին զարգացման շարք մը առանցքային ուղղութիւններ, ծիսական միօրինակութեան առնչուած և հովուական այլ հարցեր:





Գշ., 29 Յուլիս – Աստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Վարդան Եպս. Նաւասարդեան, Արժ. Տէր Աշոտ Քինյ. Աբրահամեանի ուղեկցութեամբ այցելեց Աստրալիոյ Յոյն Ուղղափառ Եկեղեցոյ Թեմի Առաջնորդ Մակարիոս Արքեպիսկոպոսին:

Միտքեր եւ եղբայրական հանդիպման ընթացքին երկու Առաջնորդները քննարկեցին երկու Եկեղեցիներու և թեմերու եղբայրական համագործակցութեան խորացման անհրաժեշտ շփումներուն հեռանկարը: Հանդիպման ներկայ էր նաև Առաջնորդարանի դիւանապետ Հայր Քրիսթոֆորոս Քրիքելիսը:

Գշ., 29 Յուլիս – Վարդան Սրբազան նախագահեց Թեմական Խորհուրդի հերթական ժողովին, որ գումարուեցաւ դէմ առ դէմ եւ առցանց: Թեմական Պատգամաւորական Ժողովէն (ԹՊԺ) ետք այս առաջին ժողովն էր, որուն ընթացքին ժողովը լսեց Սրբազան հօր միասնեայ հարուստ գործունէութեան զեկուցումը, հոգեւոր հովիւներու եւ ծխական խորհուրդի ատենապետներու տեղեկատուութիւնը, քննեց նաեւ ԹՊԺ-ի ատենագրութիւնը, վաւերացուց նախորդ հերթական ժողովի ատենագրութիւնն ու հաշուական տեղեկագիրը, ինչպէս նաեւ առաւ որոշումներ ապագայ ձեռնարկներու:

Դշ., 30 Յուլիս – Համագգայինի Շանթ Մասնաճիւղի ներկայացուցիչներ Կատար Ինգիլիզեան, Յակոբ Կիւլումեան և Մարօ Գահրամանեան այցելեցին թեմիս առաջնորդարանը բարի գալուստի և շնորհաւորանքի իրենց մաղթանքները փոխանցելու Աստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Վարդան Եպս. Նաւասարդեանին:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան գաղութը յուզող հարցեր և միասնական ծրագրեր իրականացնելու անհրաժեշտութիւնը Սուրբ Եկեղեցոյ հովանիին տակ: Սրբազան Հայրը ջերմութեամբ ողջունեց ազնիւ այցելութիւնը Համագգային ընտանիքի ներկայացուցիչներուն և իր ամբողջական աջակցութիւնը փոխանցեց անոնց ծրագիրներուն:



Դշ., 30 Յուլիս – Առաջնորդարանի կազմակերպած 42րդ Առցանց Դասախօսութիւնը տեղի ունեցաւ երեկոյեան ժամը 7-ին: Զեկուցաբերն էր Յունահայոց Թեմի Առաջնորդ **Գերաշնորհ Տէր Խորէն Եպիսկոպոս Առաքելեան:** Նիւթ՝ **«Աղանդաւորական Շարժումներու Քայքայիչ Գործունէութիւնը»:**

Ձեռնարկը սկսաւ Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Հօր աղօթքով, որմէ ետք հանդիսավար Նշան Պասմաճեան ներկայացուց բանախօսը եւ հարթակը յանձնուեցաւ Խորէն Սրբազան հօր:



Սրբազանը լայն բացատրություն տուաւ աղանդաւորներու Հայաստան մուտքին մասին, որ սկսած էր 1953-էն սկսեալ Մեծամորի Աթոմակայանի կառուցման սովետական շրջանին: Քարոզիչներ, Եհովայի Վկաներ եւ Պենտեկոստական շարժումներէն, որպէս մասնագէտներ եկած էին Հայաստան եւ սկսած էին քարոզել բանութեան շրջանակներու մէջ: Սովետ կարգերը արգիլեցին այդ, որովհետեւ համայնավար անհաւատ վարչակարգի սկզբունքներուն խոտոր կը համեմատէր այդպիսի քարոզչութիւն: Շարժումները մարեցան մինչեւ 1988-ի մեծ երկրաշարժը: Մորմոնները օգտագործեցին այս առիթը եւ տարբեր

տեսակի օժանդակութիւն հասցուցին աղետեալ գօտի, որոնք լայն ընդունելութիւն գտան օրուան իշխանութեան կողմէ, քաջալերուեցան յատկապէս կառավարական բարձրաստիճան ղեկավարներու, յատկապէս Վազգէն Մանուկեանի եւ Արշակ Սատոյեանի կողմէ: Բնականաբար, այս վերջինները բարեմտօրէն եւ անտեղեակ դռները լայն բացին անոնց առջեւ: Օժանդակութեան ճամբով, Մորմոնները ուղարկեցին նաեւ իրենց քարոզիչները: Մորմոնները թէ Եհովայի Վկաները միջազգային գաղտնի ծառայութիւններու հետ կապեր ունին, հետեւաբար օժանդակութիւնը մարդկայինէն աւելի քաղաքական նպատակներ կը հետապնդէր: Մանրամասնութիւնները ակնորդել կցուած Վիտէօ յղումին մէջ: Անոնք կրթանպաստներ առաջարկեցին ուսանողներու, պայմանաւ որ անոնք Մորմոն դառնային: Միւս կողմէն, անոնք պաշտօնապէս գրանցուեցան Հայաստանի մէջ: Մինչ այդ աղանդաւորներու ի նպաստ Հայաստանի կառավարութիւնը բազում փաստաթուղթեր ստորագրած էր, որոնք կապ ունէին խիղճի եւ դաւանանքի ազատութեան հետ:

Մորմոններուն հետ միասին սկսան միւս աղանդները մուտք գործել, որոնց ամենէն մեծն ու զօրաւորը՝ Եհովայի Վկաները:

Սրբազան հայրը անդրադարձաւ անվտանգային հարցերու, տալով օրինակներ, որոնցմէ կը մէջբերենք: Եհովայի Վկայ դաւանանքը չընդունիր զինուորական պարտադիր ծառայութիւնը: Ուստի շատեր Եհովայի Վկայ դարձան որպէսզի իրենց զաւակները զինուորական ծառայութենէ խուսափին: Սա արդէն մեր բանակին հասցուած վնաս էր, օրէնքով պաշտպանուած: Երկրորդ օրինակ մը, Եհովայի Վկայութիւնը չընդունիր հիւանդի մը արին ներարկելը երբ ան արեան պէտք ունի: Սա արդէն առողջական հարց կը ստեղծէ որեւէ ժողովուրդի համար: Հակառակ այս անհեթեթութեանց այս եւ նման աղանդներ քարոզող հաստատութիւնները պաշտօնական գրանցում ստացան Հայաստանի մէջ:



Գալով տնտեսական վնասներուն, Եհովայի Վկաները ունին տասաներորդ հաւաքելու դրութիւն, այսինքն իւրաքանչիւր անդամ իր եկամուտին 10 առ հարիւրը պէտք է վճարէ Եհովայի Վկաներու Կեդրոնին, այսինքն գումարները կը փոխանցուին իրենց կեդրոնը՝ Միացեալ Նահանգներ: Այժմ 50 հազարէ աւելի կը հաշուեն Եհովայի Վկաները Հայաստանի մէջ, կարելի է հաշիւ մը ընել թէ որքան գումար Հայաստանէն օրինաւոր ձեւով դուրս կ'ուղարկուի, ինչ որ մեծ տնտեսական վնաս կը հասցնէ

մեր երկրին: Այսպես կը գործեն նաեւ միւս աղանդները ինչպէս Հոգեգալստական- Կեանքի Խօսք եւ այլք: Այսօր Հայաստանի մէջ աղանդաւոր 67 շարժում կայ գրանցուած:

Մէկ խօսքով, մեծ տերութիւններ կեցած են այս շարժումներուն ետին, որոնք «բաժնէ որ տիրես» սկզբունքով մեր երկիրը կը ջլատեն:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին պայքարեցաւ եւ կը շարունակէ պայքարիլ սակայն պետական թոյլտուութիւնը եւ քաջալերանքը աղանդաւորներուն, իսկ վերջին 6 տարիներուն՝ պետական մակարդակով հալածանքը եկեղեցւոյ դէմ, ինչպէս Հայ Եկեղեցւոյ Պատմութիւն նիւթի վերացումը պետական ծրագրէն, Ս Էջմիածնի դէմ պայքարը եւ այլն, արգելք են եւ կը դժուարացնեն պայքարը:

Խորէն Սրբազան յայտնեց որ մեր հոգեւորականներու թիւը շատ քիչ է աշխարհի մէջ, ընդամենը 700:



Միւս կողմէն պէտք է օգտագործել գիտնանք արդի քարոզչական միջոցները, որպէսզի կարենանք շարունակել մեր պայքարը եւ քրիստոնէական եւ ազգային ուղիղ դաստիարակութեան ջամբումը:

Խորէն Եպիսկոպոս պատասխանեց իրեն ուղղուած բոլոր հարցումներուն:

Իր փակման խօսքին մէջ Վարդան Սրբազան շնորհակալութիւն յայտնեց դասախօս Սրբազան հօր այս շատ յաջող, զարգացնող եւ զգաստացնող դասախօսութեան համար, ապա աղօթքով փակեց աննախընթաց այս ձեռնարկը:

Մօտէն ճանչնալու համար մեր դասախօսը, ստորեւ կը գտնէք Խորէն Սրբազանի կենսագրութիւնը:

Կենսագրութիւն Գերշ. Տէր Խորէն Եպիսկոպոս Առաքելեանի

Ծնած է 1980-ին Արգել: Աւագանի անունը՝ Տարօն:

1986-1997- Կը յաճախէ Վախտանգ Անանեանի անուան միջնակարգ դպրոցը:

1997-2001- Երևանի Պետական Համալսարանի մէջ կ'ուսանի բանասիրութիւն:

2001-2003 - կը կատարէ իր զինուորական ծառայութիւնը, որպէս դասակի հրամանատար: Սրբազանը ունի սպայական կոչում:

2003-2007- Գէորգեան Հոգևոր Ճեմարանի ուսանող:

2007- Կը ձեռնադրուի սարկաւագ:

2009 – Կը ձեռնադրուի կուսակրօն քահանայ

2015 – Կը ներկայացնէ վարդապետական թեզը «Բիւզանդական եկեղեցւոյ հարցում-մեղադրանքները և Հայոց Եկեղեցւոյ հայրերու պատասխանները՝ ըստ հայկական աղբիւրներու» (Խաչի պաշտամունքի, Ս. Սարգիսի տօնի և մատաղի օրինակով):

2024 – Կը ձեռնադրուի Եպիսկոպոս, ձեռամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Պաշտօնավարութիւն

2007-Կաթողիկոսական ընդունարան:

2008-2009 - Մայր Աթոռի գլխաւոր ճարտարապետի օգնական:

2009-2010 - Յունահայոց թեմի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ հոգևոր հովիւ:

2010-2024 - Յունահայոց թեմի առաջնորդական տեղապահ:

2024 – Էն ի վեր Յունահայոց թեմի Առաջնորդ:

Դասախօսութիւնը կարելի է ակնդրել սեղմելով հետեւեալ յղումին վրայ

<https://www.youtube.com/watch?v=hVm-IgxuH3g>

«ՓԱՐՈՍ» ամբողջացուց իր հրապարակման ութնամեակը

Միբելի Փարոսի ընթերցողներ,

Փարոսի ծնունդը արդիւնք էր ընդամենը առաջարկի մը, որ կատարուեցաւ 2017-ի Մայիսին գումարուած Թեմական Պատգամատրական Ժողովին: Ժողովը միաձայնութեամբ ընդունեց առաջարկը եւ օրուան Առաջնորդն ու Թեմական Խորհուրդը զայն իրականութիւն դարձուցին Օգոստոս 2017-ին:

Որոշուեցաւ որ Առաջնորդարանը ունենայ իր լրատու ամսաթերթը:

Թեմական Խորհուրդը նշանակեց Տիար Նշան Պատմաճեանը խմբագիր պատասխանատու: Օգոստոս 2017-ին հրապարակուեցաւ Փարոսի առաջին թիւը:

Տարիները արագ անցան, եւ արդէն այս Յուլիսին կը հրապարակուի թիւ 96-ը....:

Ութնամեակի առիթով, Փարոսի խմբագրութիւնը կը յայտնէ իր խորին շնորհակալութիւնն ու երախտագիտութիւնը Առաջնորդ Սրբազան Հայրերուն՝ Գերաշնորհ Տէր Հայկազուն Արք Նաճարեանին եւ Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեանին, իրերայաջորդ Թեմական Խորհուրդներու անդամներուն, Ծուխերու հովիւներուն եւ բոլոր Քահանայ հայրերուն, Ծխական Խորհուրդներու անդամներուն եւ իրենց եւ Առաջնորդարանի հովանիին ներքոյ գործող յանձնախումբերուն, որոնք սատար հանդիսացան թէ՛ Փարոսի բովանդակութեան եւ թէ՛ անոր որակին զարգացման գործընթացին:

Մեր շնորհակալութիւնը մօտ 2000 առջանց հասցեատէրերուն, որոնցմէ շատերուն համար Փարոսը լոյս սփռեց եւ կը շարունակէ սփռել Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայ կեանքին վրայ: Անոնք իրենց քաջալերանքի եւ քննադատական արտայայտութիւններով խմբագրութիւնս դրին յաւելեալ պարտաւորութեանց տակ, առիթ տալով որ կիրարկուի յաւելեալ բժախնդրութիւն:

Խորին շնորհակալութիւն նաեւ բոլոր ընթերցողներուն, որոնք սպասեցին Փարոսի տպագիր օրինակներուն լոյս ընծայման, ըմբռնելու համար անոր ընթերցումը:

Շնորհակալութիւն Տոքթ եւ Տիկին Յարութիւն եւ Մարօ Ճեպէճեաններուն, որոնք ամէն տարի հոգացին Փարոսի գանազան ծախսերը:

Վերջապէս, շնորհակալութիւն բոլոր անոնց, որոնք ութ տարուան ընթացքին, իրենց անսակարկ նուիրումով որպէս անցեալի եւ ներկայի խմբագրութեանց անդամ եւ աշխատակից Փարոսը դարձուցին փնտռուած հրատարակութիւն:

Վարձքը կատար «Փարոս»ի մեծ ընտանիքի բոլոր անդամներուն:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ-ի

31 Յուլիս 2025

Լուրեր Ծուխերէն

Ուէնթուրըթվիլ - ՄԻՏՆԻ Սուրբ Երրորդութիւն Եկեղեցի

Դժ., 2 Յուլիս – Արժ Տէր Միւռն Քահանայ Աւետիսեան կը շարունակէ Սուրբգրոց սերտողութիւնները Հայերէն լեզուով, ամէն Չորեքշաբթի երեկոյեան ժամը 8-ին Ս. Երրորդութիւն

եկեղեցոյ մէջ: Սերտողութեանց պահերը ուղիղ եթեր կը հեռասփռուին: Դէմ առ դէմ հետեւողները կը մասնակցին աւարտի ընկերային հաւաքներուն:

Ուրբ., 4 Յուլիս – Երիտասարդաց Միութիւնը երկշաբաթեայ դրութեամբ կը հաւաքուի Ուրբաթ գիշերները, Տէր Միւռնին հետ Սուրբգրոց սերտողութիւն կատարելու համար Անգլերէն լեզուով: Այս երեկոյ, մէկ ժամուան սերտողութենէ ետք անոնք ունեցան ընկերային հաւաք, որուն ընթացքին հրամցուեցաւ մսաշոթ որպէս ընթրիք:



Շբ., 6 Յուլիս – Տէր Միւռն օրինեց Պօղոսեան ընտանիքի անդամները իրենց նուիրած սկիհի երկու ծածկոցներուն առիթով: Ան նաեւ օրինեց ծածկոցները:

Կիր., 6 Յուլիս – Տէր Միւռն պատարագեց եւ քարոզեց: Նոյն երեկոյ, ան Էտկարեան սրահին մէջ հիւր դասախօսն էր Համազգայինի Գրական Գեղարուեստական Յանձնախումբի կազմակերպած Յովհաննէս Շիրազի նուիրուած Գրական երեկոյին: Առաջնորդ Սրբազան հայրը կատարեց փակման խօսքն ու աղօթքը:

Ապա Սրբազան հայրը Առաջնորդարանին մէջ ընդունեց Տէր Հայրը եւ Ծխական Խորհուրդի անդամները, ուր ի ներկայութեան Թեմականի ատենադպիր Պրն Գեորգ Զափրագեանի Ծխական Խորհուրդի անդամները ներկայացուեցան Սրբազան հօր: Սրբազան հայրը գնահատեց անոնց տարած կամաւոր աշխատանքը եւ թելադրեց շարունակել աստուա-



ծահաճոյ իրենց գործունէութիւնը:

Դժ., 9 Յուլիս – Տէր Միւռն կատարեց Ս. Գրոց սերտողութիւն որ ուղիղ եթեր սփռուեցաւ: Բոլոր ներկաները քաջալերուած են մասնակցելու սերտողութեան այս պահերուն, խոկալու եւ իրարու հետ խորհրդածելու նիւթեր, որոնք կը միտին հոգեւոր զարգացման:



Ուրբ 11 Յուլիս – Տէր Միւռն, ընկերակցութեամբ Ծիական Խորհուրդի անդամի մը, Պաթմանեան սրահին մէջ այցելեց ՀՀԲԿ-ի մեծահասակներուն, որոնց հետ ճաշեց եւ միացաւ անոնց խմբերգներուն, բարձր տրամադրութիւն ստեղծելով մեր պապիկ-մամիկներուն մօտ:

Կիր., 13 Յուլիս – Յընթացս Պատարագի, Տէր Միւռն տուաւ շատ իմաստալից քարոզ մը: Հաւատացեալները հիւրընկալուեցան Տիկնանց Միութեան Յետ-Միջօրէի Թէյով:

Կիր., 20 Յուլիս – Տէր Միւռնի արձակուրդի մեկնումին հետեւանքով Արժ Տէր Աշոտ Քահանայ Աբրահամեան պատարագեց եւ քարոզեց: Հաւատացեալները հիւրասիրուեցան թէյասեղանի շուրջ, պատրաստուած Տիկնանց Միութեան կողմէ:

Ուրբ., 25 Յուլիս – Ընդառաջելով ՍԵ Եկեղեցւոյ հրաւերին, Առաջնորդ Սրբազան Հայրը այցելեց եկեղեցի, ընկերակցութեամբ Պրն Գեորգ Զափրագեանի: Ան

ընդունուեցաւ Տէր Միւռնի, Ծիական Խորհուրդի եւ եկեղեցական մարմիններու անդամներուն կողմէ: Հրաշափառով մուտք գործելէն ետք, Տէր Միւռն բարի գալստեան խօսք արտասանեց: Ան ըսաւ.

Սրբազան հայր, սիրելի եղբայրներ եւ քոյրեր ի Քրիստոս,

Սրտի անհուն բերկրանքով եւ երախտիքով բարի գալուստ կը մաղթենք ձեզի ՍԵ Եկեղեցւոյ մէջ, որպէս Առաջնորդ ձեր Անդրանիկ այցին առիթով: Այս պահը շատ նշանակալից է մեր ծուխի համայնքին



համար, օրհնութիւն մը, որ մեր սրտերուն մէջ պիտի մնայ ինչպէս նաեւ եկեղեցւոյ պատմութեան մէջ:

Ձեր ներկայութիւնը մեր մէջ լոկ քաջալերանքի աղբիւր չէ այլ խորհրդանիշ է միասնութեան Քրիստոսի եւ Իր հիմնած եկեղեցւոյ մէջ: Որպէս մեր հոգեւոր հայրը, դուք մեր հաւատքը կը զօրացնէք եւ մեզի կը յուշէք թէ որպէս ծուխ առաքելութիւն ունինք որն է՝ համոզումով ապրիլ Աւետարանը, անսահման սէր ունենալ եւ համեստաբար ծառայել:



Ձեր ներկայության կ'ուզեմ անոնց շնորհակալություն յայտնել, ոչ միայն զիրենք պատուելու համար այլ նաեւ խորհրդածելու այն իրողության մասին թէ Եկեղեցին իրօք կ'ապրի, երբ իր անդամները սիրով կը ծառայեն իրարու: Թող իրենց օրինակը ներշնչէ ուրիշներն ալ: Թող իրենց ձեռքերը միշտ զօրանան: Եւ թող Աստուած իրենց վարձահատոյց ըլլայ: Շնորհակալություն Սրբազան Հայր ձեր քաջալերանքին եւ ձեր ներկայության համար: Թող մեր Եկեղեցին շարունակէ մեծնալ սիրով եւ միասնական ճիգերով, ի փառս Աստուծոյ: Հրամեցէ՛ք Սրբազան հայր, այս Եկեղեցին ձեր տունն է:

Ապա Վարդան Սրբազան իր ուրախութիւնը յայտնեց որ Եկեղեցի մտած էր աղօթքով եւ երգչախումբի շարականներով: Ան ըսաւ.

«Հոգեկան ջերմ եւ անկեղծ զգացումներով, կ'ողջունեմ ներկայութիւնը Ծխական Խորհուրդի եւ այլ մարմիններու մէջ գործող բոլոր անդամներուն, ինչպէս նաեւ Արեւմտեան Սիսիի ծուխի հոգեւոր մեծ ընտանիքին, ղեկավարութեամբ եւ առաջնորդութեամբ մեր շատ սիրելի հոգեւոր հովիւ Տէր Միւռնին: Եկեղեցւոյ հիմնական առաքելութիւնն է մասնակցութիւնը: Ծառայելով մենք մեր տեղը կ'ապահովենք Դրախտի մէջ:

Ան ըսաւ. Ձեր ծառայութեամբ դուք այս Եկեղեցւոյ կեանք կու տաք իսկ ձեր բացակայութեամբ՝ ձեր Եկեղեցին կը տկարանայ, կը դառնայ անկենդան եւ անշունչ:

Յանուն բոլորիս որ այստեղ ենք, ի սրտէ բարի գալուստ կը մաղթեմ ձեզի: Մենք պատիւ կը զգանք ձեր այցով, եւ շնորհակալութիւն կը յայտնենք Աստուծոյ ձեր առաջնորդութեան, հոգեւոր գորգորանքին եւ իմաստութեան համար, որոնցմով կը ղեկավարէք մեր Եկեղեցին այս օրերուն:

Այս օրը միասնական ուրախութեան եւ հոգեւոր նորոգութեան օր է: Մեր աղօթքները բարձրացնենք ձեզի համար եւ անհամբեր ենք լսելու ձեր ներշնչող խօսքերը:

Ուրախ եմ այս պահուն, կանգնած սրբազնութեանդ առաջ, շնորհակալութիւն յայտնելու կամաւոր նուիրեալ յատուկ խումբի մը, որոնք անվերապահ կը գործեն զանազան եկեղեցական յանձնախումբերու մէջ:

Սրբազան Հայր, մեր Եկեղեցական կեանքին մէջ, խորանէն մինչեւ վարչական գործունէութիւն, բարեսիրական աշխատանքէն մինչեւ հիւրասիրութիւն, երգչախումբէն մինչեւ հոգեւոր ուսուցում, անհատներ կան որոնք իրենց ժամանակը, ներուժը եւ իրենց սիրտը ի սպաս դրած են Եկեղեցւոյ, առանց որեւէ ակնկալութեան:

Այս յանձնախումբերը միացած են Քրիստոսի սիրով եւ անոր ծառայութեամբ: Իրենց տարած անսկարկ աշխատանքով անոնք ողնասիւն են մեր ծխական առաքելութեան:



Այս եկեղեցին Տիրոջ հոգևոր տունն է, ուր ամեն ոք, երջանկութիւն գտնելու համար կը ծառայէ Տիրոջ, աղօթքով եւ մասնակցելով Պատարագին:

Մենք, հոգևորականներս, կրնանք աղօթք բարձրացնել եւ Պատարագ մատուցել, բայց այս եկեղեցին կը բարգաւաճի ձեր ներկայութեամբ եւ մասնակցութեամբ: Ուրախ եմ այս գիշեր ձեզ տեսնելով այս սուրբ վայրին մէջ:

Մենք հոգևորականներս, կանչուած ենք ուխտ կատարելու խորանին վրայ, Աստուծոյ առաջ, ծառայելու համար մեր ժողովուրդին: Այս ծառայութիւն է Աստուծոյ: Յամենայն դէպս, ձեր ծառայութիւնը մեր ազգին ապագային համար է՝ ապահովել մեր նոր սերունդը ապրելու որպէս Քրիստոնէաներ: Մենք զայն պիտի անուանենք «Ծառայութիւն մեր ապագային», առանց մոռնալու մեր ներկան, նայելով մեր անցեալին եւ յառաջ քալելով դէպի ապագայ:

Այսօր, շնորհիւ մեր Հոգևոր Հովիւին, իր օգնականներուն եւ այլ կամաւորներու, Ս. Երրորդութիւն եկեղեցին կը բարգաւաճի եւ յառաջ կ'ընթանայ: Մենք վկայ ենք այս բոլորին: Այսօրուան այցս բոլորովին կը տարբերի նախորդ այցես: Այսօրուան զգացումս Հօր զգացում է, ո'չ Առաջնորդի: Առաջին սպասաւորի զգացում, որ կը ծառայէ այս եկեղեցւոյ որպէսզի ամբողջ էութեամբս դառնամ արդիւնաբեր այս համայնքի Հայ Քրիստոնէաներուն կեանքերուն մէջ, ուր շատեր պէտք ունին հոգևոր ծառայութեան:



Մեր եկեղեցին կոչուած է ծառայելու մեր Տիրոջ, մեր ազգին, մեր ժողովուրդին: Մէկ խօսքով՝ ծառայութեան մեր Սուրբ Եկեղեցւոյ:

Մեր եկեղեցին պիտի բարգաւաճի, յառաջընթաց արձանագրէ եւ աւելի կազմակերպ դառնայ մեր բոլորին ջանքերով: Ձեզ կը հրաւիրեմ միասնական աշխատանքի:

Այնուհետեւ, Պաթմանեան սրահին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն Տիկնանց Միութեան կողմէ, աւելի մօտէն շփուելու համար Սրբազան հօր հետ:

Ապա Սրբազան հայրը, Թեմական ներկայացուցիչը եւ Տէր հայրը մասնակցեցան Ծխական Խորհուրդի ժողովին:



Կիր., 27 Յուլիս – Մեր Տիրոջ Պայծառակերպութեան Տօնին առիթով, Առաջնորդ Սրբազան հայրը մատուցեց Սուրբ եւ Անմահ Պատարագ եւ Սուրբ Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ իր առաջին քարոզը տուաւ որպէս Առաջնորդ: Պատարագի աւարտին, Ծխական Խորհուրդի նորընտիր անդամները կատարեցին իրենց ուխտը, որմէ ետք ստացան Սրբազան հօր օրհնութիւնը:

Սրբազան հայրը քարոզեց յաւուր պատշաճի, որուն բնաբանն էր « *«Այս է իմ սիրելի Որդիս, որուն ես հաճեցայ, անոր մտիկ ըրէք»* (Մտ.17:1-6):

Իր քարոզին մեջ Սրբազանը ըսաւ որ այսօր Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին կը տօնէր իր հինգ Տաղաւար Տօներէն երրորդը եւ մեզ կը հրաւիրէ որպէս իր հաւատացեալ զաւակները վերապրելու, վերյիշելու, ներշնչուելու իրենց ստանալիք պատգամէն, փոխելու համար մեր կեանքը: Սրբազանը մեջբերելով Սուրբ Գիրքի վկայութիւնը, ուր կ'ըսուի թէ Քրիստոս առաջնորդեց իր աշակերտներէն Պետրոսը, Յակոբոսն ու Յովհաննէսը դէպի լերան մը բարձունքը եւ անոնց առջեւ պայծառակերպուեցաւ:

Հետեւաբար, մենք ալ մեր կեանքին ընթացքին կրնանք պայծառակերպուիլ Աստուծոյ խօսքով, համեստ արտայայտութեամբ, ներողամտութեամբ, հաշտութեամբ եւ պատրաստ ըլլալով մեր խաչը կրելու:

Շարունակելով, Սրբազանը բացատրեց որ այսօրուան տօնը մեզ կը հրաւիրէ վերանորոգելու մեր հաւատքը հանդէպ Աստուծոյ, որուն միջոցաւ է որ մեզի հնարաւոր է դառնալ Դրախտի Թագաւորութեան ժառանգորդ:

Սուրբ Երրորդութիւն եկեղեցոյ մեջ իր Անդրանիկ Պատարագին առթիւ, Առաջնորդ Սրբազան հայրը նախ շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ, որ զինք արժանի համարած էր ըլլալու համեստ ծառան այս համայնքին, եւ որուն իր հաւանութիւնը տուած էր Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Սրբազանը նաեւ իր ջերմ բարեմաղթանքը ուղղեց իր հոգեւոր եղբօր, հոգեւոր հովիւ Տէր Միւռն Քահանայ Աւետիսեանին, որ վերջին 3-4 տարիներոուն, աշխատասիրութեամբ եւ համբերութեամբ, ծաղկեցուց եկեղեցին եւ զայն հարստացուց հաւատացեալներով: Սրբազանը աղօթք բարձրացուց Աստուծոյ որ Իր հովանիին ներքեւ պահէ Տէր հայրը իր ծառայութեան ժամանակաշրջանին, որպէսզի անոր աղօթքները լսուին յօգուտ հաւատացեալ ժողովուրդին:

Սրբազան հայրը շնորհաւորեց նորընտիր Ծխական Խորհուրդը, ատենապետութեամբ Տիկին Թալին Իսթեֆանեանի: Ան աստուածային իմաստութիւն մաղթեց անոնց, որ իրենց գործունէութիւնը ըլլայ ի ծառայութիւն հաւատացեալներուն:



Սուրբ Երրորդութիւն եկեղեցի:

«Թող Աստուած օրհնէ եւ զօրացնէ ձեզ: Թող Սուրբ Խաչը պահէ եւ պահպանէ ձեզ այժմ եւ միշտ յաւիտեանս ամէն» խօսքերով Սրբազանը աւարտեց իր Անդրանիկ քարոզը:

Սրբազանը նաեւ ողջունեց բոլոր սարկաւագներն ու Խորանին ծառայողները, Տիկնանց Միութեան, Երիտասարդականի, Բարեկեցութեան Կեդրոնի, Կիրակնօրեայ դպրոցի եւ բոլոր յանձնախումբերու անդամները, որոնք ամէն օր ճիշդ կը թափեն այս եկեղեցին ուրախ եւ գործուն պահելու: Սրբազանը հաւատացեալներու հօտին մաղթեց որ Քրիստոսի Պայծառակերպութիւնը զիրենք զօրացնէ իրենց կեանքին ընթացքին:

Սրբազանը նաեւ իր շնորհակալութիւնը յայտնեց Թեմական Խորհուրդի ներկայացուցիչ Պարոն Գեորգ Չափրագեանին, որ միշտ ուղեկից եղած է իրեն երբ այցելած է

Յաւարտ Պատարագի, պատույ հիւրերն ու հաւատացեալները հրաւիրուեցան Պաթմանեան սրահ տօնելու համար Վարդավառ, եւ վայելելու գեղարուեստական յայտագիրը հարուստ ազգային, մշակութային եւ աւանդական բովանդակութեամբ: Պատուոյ հիւրերուն շարքին էր նաեւ Խորհրդարանի անդամ Դոկտ Հիւ Մաքսէրմօթ, Ներկայացուցիչ Փրոսփէքթի եւ Խորհրդարանական քարտուղար նահանգային Attorney General-ին: Յայտագիրը սկիզբ առաւ Անդաստանով, որմէ ետք հնչեցին Աւստրալիոյ եւ Հայաստանի քայլերգները: Բացման երկլեզու խօսք արտասանուեցան Քէվին եւ Մարինէ Աղայեաններու կողմէ, բացատրութիւն տուին Վարդավառի մասին, որ հեթանոսական տօն մըն է, որ հետագային վերածուած էր քրիստոնէական տօնի: Սիրուած երգիչ Յովիկ Գլնճեան մեներգեց երկու երգ նախքան օրուան բանախօսուհի Նորա Սեւակեանի ներկայացումը Վարդավառի հետաքրքրական պատմութեան:



Համագգային Սիտնի Պարի Անսամբլը ներկայացուց ազգագրական երկու պարեր, որմէ ետք ՄԵ եկեղեցւոյ Երիտասարդները զաւեշտ մը բեմականացուցին:

Կիրակնօրեայ դպրոցի աշակերտները երգեցին հոգեւոր երգեր, արտասանեցին սաղմոսներ եւ ներկայացուցին աւանդական խաղեր:

Ապա երկու մեծահասակ մայրիկներ զուարճացուցին ներկաները Վարդավառի մասին իրենց երիտասարդ տարիքին, իրենց ծննդավայր երկիրներու մէջ անձնական փորձառութեանց պատումով: Ապա անոնք պատուհանէն թոցուցին երկու սպիտակ աղանիներ:

Վարդ անուն կրողները շնորհաւորանքի արժանացան եւ հրաւիրուեցան բեմ հատելու համար կարկանդակ մը:

Նազանի պարախումբը ներկայացուց շատ գեղեցիկ երկու պարեր:

Սրբազան հայրը կատարեց փակման խօսք եւ փակման աղօթք:

Սակայն տօնը շարունակուեցաւ Տիճէյ-ի ուրախ երգերով, որուն ընթացքին ճաշ հրամցուեցաւ Տիկնանց Միութեան կողմէ: Հոգեւոր հովիւն ու Ծխական Խորհուրդը երախտապարտ են բոլոր անոնց որոնք մասնակցեցան այս ձեռնարկին յաջողութեան:

Մարի Քլէր Թորոսեան



ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԷՆ

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՄԻԱԾՆԱԷԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

Յուլիս 1-ին Միաձնաէջ Մայր Տաճարին մէջ հայրենի երկրի խաղաղութեան, գերեալներու ազատութեան, նեղեալներու մխիթարութեան համար Սուրբ և Անմահ Պատարագ մատուցեց Ֆրանսայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Գրիգոր Եպիսկոպոս Խաչատրեանը: Իր քարոզին մէջ, Սրբազան Հայրը, յիշեցրնելով սուրբգրային «Ուրկէ կու գաս և ո՞ւր կ'երթաս» (Օննդոց 16.8) հարցադրումը, ընդգծեց որ այն ուղղուած է իւրաքանչիւրին և ողջ մարդկութեան: Գրիգոր Սրբազանը ընդգծեց որ այդ հարցին պատասխանը գտնելու համար պէտք է քայլել դէպի Յիսուս Քրիստոս, որպէսզի ճանաչելով աստուածային ճշմարտութիւնը՝ զոյգումով ու ապաշխարութեամբ վերագտնեք մեր իրական կոչումն ու առաքելութիւնը: Պատարագիչ Սրբազանը նկատեց, որ հնչեցուած հարցը արդիական է նաև այսօր, մանաւանդ մեր երկրին համար այս փոթորկալի օրերուն:



«Իւրաքանչիւր հայ, եթէ ծանօթ է իր երկրի ու Եկեղեցու պատմութեանը, վստահ կարող է ասել, թէ որտեղից է գալիս և ո՞ւր է գնում: Իսկ այն անձը, ով ընդամենն այդ պատմութիւնից պատահիկներ գիտի, ապագայ չունի, որովհետև անցեալն իմանալով է որ պիտի կառուցես ապագան, անցեալների սխալները տեսնելով է որ պիտի փոխես ներկան և ապագայում սխալներ չգործես: Իսկ ու՞ր ենք մենք այսօր: Ազգովի կարծես այն իրավիճակի մէջ ենք, որ չգիտենք՝ որտեղից եկանք, ինչպէ՞ս յայտնուեցինք այս օրհնաբեր հողի վրայ և ու՞ր ենք գնում», - ըսաւ Սրբազանը, յորդորելով առաջնորդուիլ ազգային ինքնութեան գիտակցութեամբ լուսաւորուած ճանապարհով:


Այնուհետև Սուրբ Պատարագի «Տէր, ողորմեա» երգեցողութեան ժամանակ հոգևորականներն ու հաւատացեալները մասնաւոր աղօթք բարձրացուցին ապօրինաբար ազատագրկուած Միքայէլ և Բագրատ արքեպիսկոպոսներու, ազգային բարերար տիար Սամվէլ Կարապետեանի, բոլոր նեղեալներու եւ գերեալներու ազատութեան, ինչպէս նաև հայրենի երկրի խաղաղ և բարօր կեանքին համար:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԱԼԹԱՅԻ ԻՆՔՆԻՇԽԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՒՏԻ ԴԵՄՊԱՆԸ

Յուլիս 2-ին Վեհափառը ընդունեց Հայաստանի մէջ Մալթայի արտակարգ և լիազօր դեսպան Տոմենիկո Արդուիինը:

Վեհափառը գոհունակությամբ յայտնեց Հայաստանի մէջ Մալթայի իրականացնող մարդասիրական առաքելութեան համար: Ան յատկապէս կարևոր նկատեց միջազգային կառոյցներու աջակցութիւնը հայ ժողովուրդին:

Իր հերթին դեսպան Արդուինին Հայոց Հովուապետը տեղեկացուց, որ Մալթա կը նախատեսէ ընդլայնել գործունէութիւնը Հայաստանի մէջ, ծրագրեր իրականացնելով նաև ընկերային, կրթական ու տնտեսական դաշտերու մէջ:



ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ ՄԷՋ ՄԱՏՈՒՑՈՒԵՑԱԻ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Յուլիս 2-ին Մայր Տաճարին մէջ հայրենի երկրի խաղաղութեան, գերեալներու ազատութեան, նեղեալներու մխիթարութեան համար Սուրբ և Անմահ Պատարագ մատուցեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վարչատնտեսական բաժնի տնօրէն Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը: Իր քարոզին մէջ Սրբազանը ըսաւ.



«Մեր ժամանակներն այսօր էլ յիշեցնում են Տիրոջ երկրային կեանքի տարիները և առաքելների գործունէութեան ժամանակները, քանի որ այսօր էլ Եկեղեցու հանդէպ ծաւալում են տարատեսակ դատապարտելի արշաւներ, Փրկչի կենարար վարդապետութեան դէմ դրւում են կեղծ գաղափարախօսութիւններ:

Ինչպէս երբեմն Յաւիտենական և Խաղաղութեան թագաւորի փոխարէն՝ հրէից թագաւոր էին փնտռում, մարդկանց հոգիների Փրկչի փոխարէն՝ հռովմէացիների լծից ապստամբ ազատարար էին փնտռում, այնպէս էլ այսօր արդա-

րութիւնը բարձրաձայնողների մէջ համախոհ, իսկ արժանապատիւ խաղաղութեան քարոզիչների մէջ՝ ըմբոստներ են փնտռում», - նշեց Սրբազան Հայրը՝ յաւելելով, որ Հայրենիքի խաղաղութեան, ժողովրդի բարօրութեան համար մշտապէս աղօթող եկեղեցականն է այսօր թիրախաւորում:

«Իրենց կեանքն Աստծուն, եկեղեցուն և հայրենիքին նուիրած մեր հոգևոր եղբայրներ Միքայէլ և Բագրատ արքեպիսկոպոսները և ի պաշտպանութիւն եկեղեցու կանգնած ու մշտապէս հաւատքը գործով ապրեցրած ազգային բարերար Սամվէլ Կարապետեանն այսօր ապօրինաբար ազատագրկուած են և գտնուում են մեկուսարաններում», - ըսաւ պատարագիչ Սրբազանը, հրաւիրելով աղօթքի, որպէսզի փարատի անոնց միայնութիւնը:

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԻՐ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ ԲԱՇԽԵՑ
«ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԸՆՏԱՆԻՔԸ ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԽԱՐԻՄԽ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ
ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ**



Յուլիս 3-ին, Վեհափառի օրհնութեամբ տեղի ունեցաւ « Քրիստոնեայ ընտանիքը հայ ինքնութեան խարիսխ» խորագրով համահայկական ուխտագնացութեան հանդիսաւոր բացման արարողութիւնը:

2001-ին, Ամենայն Հայոց Հայրապետի նախաձեռնութեամբ հիմնադրուեցաւ Եկեղեցասէր Երիտասարդաց գրասենեակը, որը հետագային հիմք դարձաւ Հայ Եկեղեցւոյ Համաշխարհային Երիտասարդական Միաւորման (ՀԵՀԵՄ) ձևաւորման:

Յուլիս 2-7-ը համահայկական ուխտագնացութիւնը կազմակերպուած է ՀԵՀԵՄ-ի կողմէ, որուն կը մաս-

նակցին շուրջ 300 եկեղեցասէր երիտասարդներ՝ Նուիրապետական Աթոռներէն, Հայրապետական պատուիրակութիւններէն, Հայաստանի և Սփիւռքի տարբեր թեմերէն:

Բացման հանդիսաւոր արարողութեան կը մասնակցէին Հայաստանի ու Սփիւռքի թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ:

Հանդիպումը սկսաւ Հայրապետական մաղթերգով, ապա ներկաները ողջունեց ՀԵՀԵՄ հոգևոր առաջնորդ, ԱՄՆ Հայոց Արևմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանը: Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ ՀԵՀԵՄ 25-ամեայ գործունէութեան, ընդգրծելով, որ այն դարձած է Հայ Եկեղեցւոյ առաքելական կեանքի կարևորագոյն հանգրուաններէն մէկը:

Երիտասարդներու անունով սրտի խօսք ըսաւ ԱՄՆ Արևմտեան թեմի երիտասարդական միութեան ներկայացուցիչ Ուսաննա Ամրանը:

Հայրապետական իր պատգամն ու օրհնութիւնը բերաւ Վեհափառը, ուրախութիւն յայտնելով համախմբման առիթով, զայն լաւագոյն առիթ նուիրումը առ հայրենին, վերանորոգելու սէրն ու նախանձախնդրութիւնը հանդէպ Սուրբ Եկեղեցւոյ և ազգային ու հոգևոր արժէքներուն:

«Գովելի է, որ շարունակուիմ են ջանքերը մեծացնելու երիտասարդների ներգրաւուածութիւնը ազգային ու եկեղեցական անդաստանում, ինչպէս նաև հոգևոր կրթական ծրագրերով զօրացնելու նրանց կրօնական իմացութիւնը:

Միրասուն զաւակներ Մեր, որտեղ էլ լինի, թէ՛ Հայաստանում, և թէ՛ սփիւռքում, հոգևոր ու ազգային արժեհամակարգի պահպանութեամբ ու դրան հաւատարմութեամբ է միայն հնարաւոր հայ լինել, մնալ արժանաւոր զաւակը ազգի և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցւոյ: Այս կառոյցին և թեմերին կից երիտասարդական կազմակերպութիւններին անդամակցելով՝ հայորդիները առաւել զօրանում են Աստուածասիրութեամբ ու հայրենանուիրումով, պատրաստ լինում գովարժան յանձնառութիւնների մեր



Մայր Աթոռի հովանիին ներքոյ հայորդիներու նկատելով զօրացնելու հաւատքն առ Աստուած և

նուիրումը առ հայրենին, վերանորոգելու սէրն ու նախանձախնդրութիւնը հանդէպ Սուրբ Եկեղեցւոյ և

ազգային ու հոգևոր արժէքներուն:

Մայր Աթոռի հովանիին ներքոյ հայորդիներու նկատելով զօրացնելու հաւատքն առ Աստուած և

հաւատքի, մշակոյթի ու լեզուի պահպանութեան, այլև ազգային անդաստանում կարևոր դերակատարութեան», - ըսաւ Վեհափառը:

Անդրադառնալով այս օրերուն Հայ Եկեղեցւոյ դէմ սանձազերծուած քաղաքական արշաւին, Հայոց Կաթողիկոսը նշեց.

«Առկայ մարտահրաւերների յանդիման հրամայական է միասնական լինել և նախանձախնդիր՝ օրինականութեան պաշտպանութեան գործում, թող չտալ մեր Սուրբ Եկեղեցու հեղինակազրկումն ու նսեմացումը: Մեր բարդ ժամանակներում անհրաժեշտ է ամուր պահել հաւատքը, ազգանուիրումն ու եկեղեցանուիրումը: Ո՞վ, եթէ ոչ մենք՝ հոգևորականներ և մեր հաւատաւոր զաւակներ, որ միասնաբար կազմում ենք Սուրբ Եկեղեցին, պիտի ջանքեր ներդնենք, որպէսզի մեր կեանքում, հայրենական անդաստանում յաղթանակեն սերը, արդարութիւնը և ճշմարտութիւնը, կամայականութիւնների և ապօրինութիւնների հանդէպ գերակայեն օրէնքն ու իրաւունքը, և մեր ժողովուրդը ապրի անխռով ու միաբան»:

«Մեր ժամանակներում երիտասարդութիւնը կանգնած է բազում հոգևոր-բարոյական մարտահրաւերների, աշխարհայնացման ու աշխարհիկացման երևոյթների առջև, երբ տարատեսակ գրաւչութիւններ են հրամցում երիտասարդներին յաճախ միտումնաւոր, հեռացնելու համար ազգային աւանդոյթներից, նախնեաց ժառանգութիւնից ու նուիրական արժէքներից: Իբրև Եկեղեցու հովանու ներքոյ հասակ առած, ազգասիրութեամբ սնուած հայորդիներ՝ պաշտպանը եղէք մեր սրբութիւնների, գործուն մասնակցութիւն բերէք ձեր թեմական և համայնքային կեանքին, լծուէք ազգային ու եկեղեցական անդաստանի շինութեան ու առաջընթացի գործին», - պատգամեց Հայոց Հայրապետը:

25-ամեակի առիթով, Վեհափառը գնահատեց կառոյցի հոգևոր առաջնորդ Գերաշնորհ Ս. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանը, որ Միութեան հիմնադրման առաջին իսկ օրէն մեծ ներդրում ունի ՀԵՀԵՄ-ի գործունէութեան արդիւնաւորման մէջ, ինպէս նաև՝ Միութեան հոգևոր տեսուչ և կեդրոնական գրասենեակի տնօրէն Հոգեշնորհ Ս. Թովմա վարդապետ Խաչատրեանը, կառոյցի բոլոր նուիրեալ աշխատակիցները, թեմակալ առաջնորդներն ու հոգևոր հովիւները՝ երիտասարդներու հանդէպ անոնց առանձնայատուկ հոգատարութեան համար:



ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՄԻԱԾՆԱԷԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Յուլիս 3-ին Մայր Տաճարին մէջ Պատարագ մատուցեց Պրագիլիոյ թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Նարեկ եպիսկոպոս Պէրպէրեանը:

Իր քարոզին մէջ Սրբազանը անդրադարձաւ Հայոց աշխարհի մէջ աստուածային լոյսի ներգործուն գործութեան, որը ճառագեց Խոր Վիրապի խաւար գուրէն, ուր Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը, ընկերակցութեամբ լոյսութեան, ցուրտի, մենութեան՝ հաստատուն մնաց իր հաւատքին

մէջ և Սուրբ Հոգւոյ շնորհներով, լուսաւոր հաւատքով վերակառուցեց մեր հոգևոր հայրենիքը:


Նարեկ Սրբազան ընդգծեց, որ այդ հոգևոր հայրենիքին մեջ հաստատուեցաւ Սուրբ Էջմիածինը, որպէս աստուածային յայտնութեան մարմնացում, ուր Աստուած հանդիպեցաւ հայոց ազգին:

Սրբազան Հայրը խօսեցաւ նաև մերօրեայ դժուարութիւններուն և եկեղեցւոյ դէմ իրականացող արշաւին մասին՝ անդրադառնալով անազատութեան մեջ գտնուող հայորդիներուն:

«Այն, ինչ որ տեսանք օրեր առաջ, իսկապէս, կարելի է անուանել համազգային ամօթի օր: Մեր երկու հոգևոր եղբայրները՝ Միքայէլ և Բագրատ Սրբազանները, ինչպէս նաև ազգային բարերար տիար Սամվէլ Կարապետեանն այսօր «Վիրապ»-ի մեջ են: Նրանք լուռ են, բայց նրանց աղօթքը բարձրանում է երկինք ու այդ աղօթքի ձայնը տարածուում է Սուրբ Էջմիածնից:

... Սուրբ Էջմիածինը ամուր է իր հոգևորականաց դասով՝ ի գլուխ ունենալով Ամենայն Հայոց Հայրապետին: Այն սասանել անկարելի է, որովհետև նրա հիմքը մեր Տէրն է՝ Յիսուս Քրիստոս», - նշեց Նարեկ Սրբազանը, յորդորելով այս տագնապալի օրերուն հաստատուն մնալ հաւատքի մեջ, մնալ հաւատարիմ Սուրբ Էջմիածնի և աղօթք բարձրացնել հայրենի երկրի խաղաղութեան համար:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ



Մենք՝ Հայաստանում և Սփիւռքում պաշտոնաւարող եպիսկոպոսներս և թեմակալ առաջնորդներս, Տիրոջ կամքով համախմբուած Հայոց Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, գոհութիւն և փառք ենք մատուցում Ամենակարող Աստծուն՝ ծառայական մեր ուխտը վերանորոգելու այս առիթի համար:

Վերահաստատում ենք անսակարկ մեր սէրը, հաւատարմութիւնը և ամբողջանուէր ծառա-

յութիւնը Տէր և Փրկիչ Յիսուս Քրիստոսին, Սուրբ Թադէոս և Սուրբ Բարդուղիմէոս առաքելների քարոզութեամբ հաստատուած Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն և Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետի տեսիլքով նուիրագործուած քրիստոսահիմն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

Խորապէս վրդոված ենք Հայոց Եկեղեցու, Ամենայն Հայոց Կաթողիկոսի ու բարձրաստիճան եկեղեցականների նկատմամբ ՀՀ իշխանութիւնների և անձամբ վարչապետի հրահրած պախարակելի արշաւի առնչութեամբ, որն ուղեկցուում է հոգևորականների հանդէպ ասելութեան ու թշնամանքի տարածմամբ և անձնական բնոյթի վիրաւորանքներով ու անարգալից արտայայտութիւններով:

Հակաեկեղեցական այս արշաւը ոչ այլ ինչ է, եթէ ոչ աղետաբեր հարուած հայ ժողովրդին և հայոց պետականութեանը՝ յատկապէս ազգային կեանքում և Հայաստանի շուրջ ծաւալող գոյաբանական մարտահրաւերների համատեքստում: Հայոց Եկեղեցու տկարացումն ու հեղինակազրկումը կարող է ձեռնադրել միայն հակահայկական ուժերին և հայութեան թշնամիներին:

Խստօրէն դատապարտում ենք տարւոյս Յունիս 27-ին ուժային կառոյցների ներկայացուցիչների ներխուժումը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածք՝ Գերաշնորհ Տ. Միքայէլ Արքեպիսկոպոս Աջապահեանին ձերբակալելու՝ եկեղեցականների և հաւատացեալների նկատմամբ բռնի գործողութիւններ իրականացնելու սպառնալիքով: Տարակուսանք է առաջացնում Միքայէլ Արքեպիսկոպոսին հարկադրաբար բերման ենթարկելու որոշումը, երբ նա պատրաստակամութիւն էր յայտնել կամովին ներկայանալ իրաւապահ մարմիններին, ինչը և տեղի ունեցաւ:

Իշխանությունների հակակեղեցական քաղաքականության ցայտուն դրսևորումներից է նաև ազգային բարերար տիար Սամվել Կարապետեանի ազատագրկումը, որը կապուած է Հայոց Եկեղեցին պաշտպանելու նրա յայտարարության հետ: Իշխող քաղաքական ուժի համակարգուած քարոզչության պայմաններում ծանր մեղադրանքներով հարուցուեց քրեական հետապնդում և ազատութիւնից զրկուեց նաև Գերշ. Տ. Բագրատ արքեպիսկոպոս Գալստանեանը: Հոգևոր մեր եղբայրների, ազգային բարերարի և նրանց հետ կապակցուող մեր հայրենակիցների նկատմամբ հետապնդումները բացայայտօրէն ուղեկցուում են իշխող քաղաքական ուժի բարձրաստիճան պաշտօնատար անձանց հրապարակային ուղղորդումներով և ատելութեան խօսքի տարածմամբ՝ մինչ դատարանի դատավճիորը արդէն իսկ մեղաւորներ կարգելով նրանց: Իշխանութեան նման գործելաոճը կոպտօրէն ոտնահարում է ՀՀ Սահմանադրութեամբ երաշխաւորուած անմեղութեան կանխավարկածի և իշխանութիւնների բաժանման սկզբունքները, բացայայտում է, որ գործընթացն ունի քաղաքական դրդապատճառներ, որով և կասկածի տակ է դրում դրա օրինականութիւնը: Յորդորում ենք ՀՀ իշխանութիւններին՝ անյապաղ ազատ արձակել հոգևոր մեր եղբայրներին, ազգային բարերարին և նրանց հետ կապակցուող մեր հայրենակիցներին և գործել բացառաբար օրէնքի շրջանակներում՝ ապահովելով նրանց արդար դատաքննութեան իրաւունքը:

Անհանդուրժելի ենք համարում ինչպէս իշխանութեան, այնպէս և որևէ մէկի ոտնձգութիւնը ուղղուած Հայրապետական Աթոռին և եկեղեցական կանոնական սկզբունքներին:

Որդիական խոնարհութեամբ եպիսկոպոսաց դասս և թեմակալ առաջնորդներս մեր հաւատարմութիւնն ենք յայտնում Հայոց Եկեղեցու ազգընտիր գահակալին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Հայոց Եկեղեցին, բարձրագոյն մարմին ունենալով Ազգային-Եկեղեցական ժողովը, յետայսու ևս ղեկավարուելու է դարերով սրբագործուած իր ընթացակարգերով՝ բացառելով արտաքին որևէ միջամտութիւն: Հայոց Եկեղեցու հոգևոր դասը Հայաստանում և ի սփիւռս շարունակելու է տարածել Յիսուս Քրիստոսի ճշմարիտ վարդապետութիւնը և հոգևոր ու ազգային ոգով կրթել մեր ժողովրդի զաւակներին՝ հոգածու և պատշաճ արձագանքելով թէ՛ ներազգային ու ներպետական, թէ՛ արտաքին մարտահրաւերներին՝ իրացնելով ճշմարտութեան խօսնակ լինելու Տէրունի պատգամը (հմմտ. Յովհ. 8.32): Կոչ ենք ուղղում մեր Սուրբ Եկեղեցու զաւակներին՝ հաստատուն մնալ առ Աստուած հաւատքի մէջ, հաւատարիմ՝ ազգային սրբութիւնների ու նուիրական արժէքների պաշտպանութեան դիրքերում և չտրուել պատակտիչ գործողութիւնների:

Աղօթում ենք, որ Երկնաւոր Տէրը խաղաղութեան մէջ արդար, բարօր և ապահով պահի Հայաստան մեր հայրենիքն ու աստուածօրհնեալ հայ ժողովրդին, անսասան՝ Իր իսկ հիմնած Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որը յենասիւնն է հայոց ինքնութեան և պետականութեան, ու ծաղկեալ՝ Հայրապետական զաւազանը Հայոց Հայրապետի:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՄԻԱՇՆԱԷՋ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ ՅՈՒԼԻՍ 6-ԻՆ



Պատարագիչն էր ԱՄՆ Հայոց Արևմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանը:

Սրբազան արարողութեան ներկայ էին Հայաստանէն ու Սփիւռքէն թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, ՀԵՀԵՄ-ի եկեղեցասէր երիտասարդներ և բազում հաւատացեալ հայորդիներ:

Իր քարոզին մէջ Սրբազան Հայրը անդրադարձաւ խոնարհութեան առաքինութեան որպէս հոգևոր կեանքի առանցք, ընդգծելով, որ խոնարհութեան կենդանի և կատարեալ օրինակը մեր Տէր Յիսուս Քրիստոսն է:

«Սիրելի հայորդիներ՝ Տերը հրաւիրում է ամենքիս պայծառակերպության: Խնդրենք Աստծուց, որպէսզի բացի մեր հոգու աչքերը՝ տեսնելու ճշմարիտը, տեսնելու այն, ինչ սուրբ է և վստահուած է ամենքիս Տիրոջ կողմից»:

Ապա, խօսքը ուղղելով համահայկական ուխտագնացութեան մասնակից եկեղեցասեր երիտասարդներուն, Յովնան Սրբազան կարևորեց Հայաստանի և Սփիւռքի հայորդիներու համախմբումը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

«Սուրբ Էջմիածինը ներշնչում է մեզ խոնարհուելու մեր սրբազան աւանդոյթների առջև, Սուրբ Էջմիածինը մեր առջև բացում է լուսաւորեալ կեանքի ճանապարհը, նոր թռիչք տալով ձեր ծաղկեալ հոգիներին և իղձերին, որպէսզի, ինչպէս այսօր և յաւիտեան, միաւորի աշխարհասփիւռ հայութեանը, դառնալով ոգեշնչման աղբիւր մեր զաւակների և զալիք սերունդների համար»: - նշեց Սրբազանը:

Ապա ան պատգամեց Հայրենիքով ներշնչուած, Սուրբ Էջմիածնով զօրացած ամուր փարիլ մեր սրբութիւններուն, միմեանց նկատմամբ անվերապահ սիրով յաղթահարել փորձութիւնները և առաջնորդուիլ դէպի կենարար լոյսը:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ 8/07/25

Վեհափառին հայրապետական տնօրինութեամբ կատարուեցան նորած եկեղեցականներու նշանակումներ:

Հոգեշնորհ Ս. Սեպուհ արեղայ Ասատրեանը նշանակուած է Մայր Աթոռի Տեղեկատուական համակարգին մէջ որպէս գործավար-քարտուղար:

Հոգեշնորհ Ս. Մխիթար արեղայ Եփրեմեանը, ծառայութեան է կոչուած Գեորգեան հոգևոր ճեմարան որպէս աւագ վերակացու:

Հոգեշնորհ Ս. Յովսէփ արեղայ Յակոբեանը նշանակուած է «Թրբանճեան» ընծայարանի մէջ որպէս փոխտեսուչ ուսումնադաստիարակչական գծով:

Հոգեշնորհ Ս. Վազգէն արեղայ Կարապետեանը ծառայութեան է կոչուած «Գարեգին Ա» կրթական կեդրոն որպէս գործավար-քարտուղար:

Արժանապատիւ Ս. Առն քահանայ Մարտիրոսեանը նշանակուած է ծառայելու Իրաքի հայոց թեմին մէջ: Արժ. Ս. Եղիա քահանայ Փահլևանեանը պիտի ծառայէ Տավուշի թեմին մէջ:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ ՈՒԽՏԱԻՈՐՆԵՐԸ

Յուլիս 10-ին Վեհափառը ընդունեց ԱՄՆ Հայոց Արևելեան թեմի Պոսթընի Սուրբ Երրորդութիւն և Ուստրի Սուրբ Փրկիչ եկեղեցիներու համայնքներու ուխտաւորները, առաջնորդութեամբ Պոսթընի Սուրբ Երրորդութիւն եկեղեցոյ հոգևոր հովիւ Արժ Ս. Վազգէն քահանայ Քուզույեանի և Ուստրի Սուրբ Փրկիչ եկեղեցոյ հոգևոր հովիւ Արժ Ս. Թադէոս քահանայ



Բարսեղեանի: Նորին Սրբութիւնը կարևորեց ուխտագնացութիւններն ի հայրենիք, որոնք կը նպաստեն հայրենաճանաչութեան և հայրենասիրական զգացումներու զօրացման:

Վեհափառ Հայրապետը նաև արձանագրեց, որ Մայր Աթոռը սփիռքահայ երիտասարդներու համար կը կազմակերպէ հայագիտական դասընթացներ, որուն նպատակն է զօրացնել հայոց լեզուի և պատմութեան իմացութիւնը, հոգևոր գիտելիքները, ինչպէս նաև հաղորդ դարձնել հայրենիքի հոգևոր-մշակութային ժառանգութեան ու արժէքներուն:

Վեհափառը նաև պատասխանեց ուխտաւորներու հարցերուն:

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ ՔԱՀԱՆԱՆԵՐՈՒ ԺՈՂՈՎ

Յուլիս 11-ին Վեհափառի նախագահութեամբ, Գեորգեան հոգևոր ճեմարանի հանդիսասարահին մէջ տեղի ունեցաւ քահանայից տարեկան ժողովը, որուն մասնակցեցան թեմերու և եկեղեցական կառոյցներու մէջ սպասաւորող 215 քահանայ հայրեր:

Ներկաները ողջունեց Գերաշնորհ Ս. Մուշեղ եպիսկոպոս Բաբայեան, որ նշանակուած է փոխարինելու Գերաշնորհ Ս. Միքայէլ Արքեպիսկոպոս Աջապահեանը, որպէս քահանայից հաւաքներու յանձնախումբի նախագահ: Այնուհետև իր հայրական օրհնութիւնն ու պատգամը բերաւ Վեհափառը՝ ընդգծելով, որ Յունիս 27-ին ծրագրուած հաւաքը հնարաւոր չեղաւ գումարել ուժային կառոյցներու ներկայացուցիչներու Գերաշնորհ Ս. Միքայէլ Արքեպիսկոպոս Աջապահեանը ձերբակալելու նըպատակով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ ձեռնարկած անընդունելի գործողութիւններուն պատճառով:



Նորին Սրբութիւնը նշեց, որ քահանայից հաւաքը առիթ է խորհրդածելու ազգային-եկեղեցական կեանքին մէջ առկայ հիմնախնդիրներու, ինչպէս նաև Եկեղեցւոյ շուրջ վերջին մտահոգիչ զարգացումներուն, եկեղեցականներու դէմ իրականացուող յարձակումներու և երկու Սրբազաններու եւ ազգային բարերար տիար Սամվէլ Կարապետեանի կալանաւորման վերաբերեալ:

«Ներկայիս բարդ ժամանակներում հոգևորականներս կոչուած ենք ոչ միայն հոգեփրկչական մեր առաքելութիւնը իրականացնելու, այլև, ցաւալիօրէն, դիմագրաւելու հակաեկեղեցական յարձակումները: Մակայն մենք հաւատքով ու ոգով ամուր ենք մնում՝ համաձայն սուրբգրային խօսքի. «Նեղութիւնները համբերութիւն են բերում, համբերութիւնը՝ փորձառութիւն, փորձառութիւնը՝ յոյս: Յոյսը երբեք չի ամաչեցնում, որովհետև Աստծու սէրը սփռուած է մեր սրտերում» (Հռ. 5.3-5):

Միեւնի հոգևոր հայրեր, աշխարհում և մեր տարածաշրջանում ընթացող զարգացումները լուրջ խնդիրների առջև են կանգնեցրել մեր երկիրն ու ժողովրդին: Մենք խորապէս մտահոգուած ենք, որ փոխանակ համայն հայութեանը համախմբելու, հասարակութեան մէջ անջրպետները վերացնելու՝ Հայաստանի իշխանութիւնները շարունակում են արշաւ իրականացնել Եկեղեցւոյ նկատմամբ:

Որքան էլ փորձ կատարուի Եկեղեցու դեմ քայլերը ներկայացնելու որպես առանձին եկեղեցականների հանդեպ ուղղուած գործողութիւններ, այսուհանդերձ, ակնյայտ է, որ դրանք կրում են համակարգային բնոյթ, և թիրախաւորուած է բուն Եկեղեցին», ըսաւ Վեհափառ Հայրապետը:

Անդրադառնալով նաև անցնող օրերուն իշխանութեան կողմէ եկեղեցականաց միասնականութիւնը խաթարելու և միմեանց դէմ տրամադրելու քայլերուն՝ Ամենայն Հայոց Հայրապետը արձանագրեց. «Մեր Սուրբ Եկեղեցում ողջամտութիւնը, եղբայրական ոգին, միաբանութիւնը գերակայ են, քանզի կոփուած են դարերի ընթացքում և ուժ են առնում մեր բազմադարեայ պատմութիւնից ու փորձառութիւնից»: Ըստ Նորին Սրբութեան, Հայոց Եկեղեցին, իր հոգևոր դասով, չի կրնար լուր ու անտարբեր մնալ ազգային ինքնութեան ու հայրենիքի անվտանգութեան ուղղուած սպառնալիքներու, պատմութեան խեղաթիւրման երևոյթներու յանդիման, անտեսել մեր պետութեան ու ժողովուրդի շահերը, չի կրնար չբարձրաձայնել արցախահայութեան ոսնահարուած իրաւունքներու և Բաքուի մէջ գերութեան մէջ անօրինաբար պահուող մեր զաւակներու նկատմամբ գործադրուող անարդարութիւններու մասին:



«Միշտ պահպանեք հոգևորականի բարձր կոչմանը յարիր կեցուածքը՝ առանց ներքաշուելու կեղծ և չարամիտ օրակարգերի մէջ՝ թոյլ չտալով Եկեղեցու հասցէին վիրաւորանք և չարախօսութիւն: Մի վարանեք սաղորիչ յարձակումներին պատասխանել ճշմարտութեամբ, արիութեամբ ու սիրով: Անհրաժեշտ աշխատանք տարեք, որպէսզի ժողովրդի մէջ պատշաճ կերպով ընկալուեն հակաեկեղեցական ընթացքների բուն դրդապատճառները: Թոյլ չտանք, որ մերժելի այս երևոյթները, տարատեսակ մոլորեցնող հրապարակումներն ու յայտարարութիւնները որևէ կերպ թիրջնկալումների տեղիք տան՝ տկարացնելով մեր ազգն ու Եկեղեցին: Միշտ գիտակցենք, որ բոլոր հայորդիները մեր հոգևոր զաւակներն են և սիրով խրատենք ու ճիշտ ճանապարհի ուղղորդենք նրանց»:

Ապա Ժողովի ընթացքին, եկեղեցի-պետութիւն յարաբերութիւններու, իշխանութիւններու եկեղեցահալած քաղաքականութեան և եկեղեցականներու դէմ թշնամանքի ու ատելութեան խօսքի, մարդու իրաւունքներու վերաբերեալ զեկոյցներ ներկայացուցին Մայր Աթոռի Դիւանատան եկեղեցական ժողովական կառոյցներու գրասենեակի տնօրէն Արժ Տ. Մովսէս քահանայ Սահակեանն ու Իրաւունքի և արդարութեան կեդրոն «Թաթոյան» հիմնադրամի տնօրէն տիար Արման Թաթոյեանը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՔԱՀԱՆԱՅԻՅ ՀԱԻԱՔԻ – 11/07/25

Մենք՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հայաստանեան թեմերում սպասաւորող քահանաներս, գոհութիւն ենք յայտնում Երկնաւոր մեր Տիրոջը, որ բարձր նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, առիթն ունեցանք համախմբուելու Միաձնաէջ Սուրբ Էջմիածնում, միասնաբար խորհրդածելու սրբազան մեր առաքելութեան շուրջ և աղօթք բարձրացնելու աշխարհասփիւռ հաւատաւոր մեր ժողովրդի և հայրենիքի համար:

Խորապէս մտահոգուած ենք հայրենի մեր երկրում տեղ գտնող վերջին օրերի ցաւալի զարգացումներով: Աշխարհաքաղաքական բարդ իրողութիւնների պայմաններում ամենատարբեր պատճառաբանութիւններով երկրում իրականացող քաղաքական հետապնդումները և այդ շրջագծում ՀՀ վարչապետի ու իշխող ուժի ներկայացուցիչների կողմից սանձազերծուած արշաւը Հայոց Եկեղեցու և եկեղեցականութեան դէմ խաթարում են ազգային կեանքը, առկայ մարտահրաւերներին յանդիման ջլատում մեր ժողովրդի միասնականութիւնը և տկարացնում մեր պետութեան դիրքերը աշխարհի համայնապատկերում:

Սուրբ Եկեղեցու նկատմամբ Հայաստանի Հանրապետության իշխանությունների դրսևորած անյարիր վարքագիծն ու անպարկեշտ խոսույթը, շարունակական սպառնալիքները և հոգևորականության պառակտման անթաքոյց փորձերը վիրավորում են ի սփիւռս աշխարհի մեր հաւատացելոց ազնիւ զգացումները, նաև ուղղակիօրէն ոսոնահարում ՀՀ Սահմանադրութեան, «Խղճի ազատութեան և կրօնական կազմակերպութիւնների մասին» օրէնքի և միջազգային բազում պահանջներ: Դատապարտելի է ի պաշտպանութիւն Հայոց Եկեղեցու հանդէս եկած ազգային բարերար տիար Սամվել Կարապետեանին ազատութիւնից զրկելը: Անընդունելի է նաև կալանաւորուած Տ. Բագրատ արքեպիսկոպոս Գալստանեանի և նրա համախոհների պարագայում անմեղութեան կանխավարկածի սկզբունքի միտումնաւոր անտեսումը իշխանութիւնների կողմից: Մեծ ընդվզումով և ցաւով ականատեսը դարձանք Յունիսի 27-ին Տ. Միքայէլ արքեպիսկոպոս Աջապահեանին ազատութիւնից զրկելու նպատակով Սուրբ Էջմիածին իրաւապահ մարմինների մեծաքանակ ուժերի ներխուժմանը: Հակառակ տրուած հաւաստիացումներին, որ Սրբազան Հայրն ինքնակամ կը ներկայանայ Քննչական կոմիտէ քահանայից հաւաքի աւարտին՝ ժամը 16:00-ին, իրաւապահները նախընտրեցին ծրագրածն իրագործել անհամաչափ բռնի ուժի կիրառմամբ, ինչն արդարօրէն առաջ բերեց ամենքիս բողոքը՝ նաև խոչընդոտելով ամենամեայ մեր հաւաքի անցկացմանը: Միքայէլ Սրբազանը Քննչական կոմիտէ մեկնեց ինքնակամ: Համայն հայութեան Սրբութիւն Սրբոցի նկատմամբ սոյն ոսոնձութիւնը, սրբավայրի աղօթական միջավայրի խաթարումը և Ամենայն Հայոց Հայրապետի ու հոգևոր դասի նկատմամբ նման վերաբերմունքը խստօրէն դատապարտելի և մերժելի են:



Թշնամանքի և ատելութեան խօսքը, խտրականութեան քարոզչութիւնը և տարատեսակ բռնութեան կոչերը վտանգաշատ ու կործանարար են և երբեք չեն կարող բարիք պարգևել ազգային և հայրենական մեր կեանքին: Հայոց Եկեղեցու նուիրապետութեան, մեր նուիրական արժէքների ու սրբութիւնների թիրախաւորումը անընդունելի է և անհանդուրժելի՝ յղի ազգի և հայոց ապագայի համար անդառնալի հետևանքներով: Հարկ չկայ հայրենիքը և մեր ժողովրդին կանգնեցնել նոր ցնցումների և արհաւիրքների առջև:

Քաջ գիտակցելով Հայոց Եկեղեցու առաքելութիւնը մեր ազգի միասնականութեան պահպանման, հանրային համերաշխութեան կերտման և հայոց պետականութեան զօրացման գործում՝ իբրև հոգևոր հովիւներ անսասան ենք մեր կոչման մէջ՝ ծառայելու Փրկիչ մեր Տիրոջը և Նրա կենսատու Սուրբ Աւետարանի քարոզչութեանը, հայ ժողովրդի հոգևոր կեանքի պայծառութեանը, ազգային անդաստանում տերունահաստատ ճշմարտութեան և արդարութեան պաշտպանութեանը: Այս յարձակումների յորձանուտում մեր համայնքների հետ միասին պիտի անյողդող պաշտպանենք իրաւունքները մեր Սուրբ Եկեղեցու, նաև հետամուտ լինենք կալանաւորուած Սրբազան Հայրերի և ազգայինների նկատմամբ արդարութեան իրագործմանը ու ազատ արձակմանը:

Անդրդուելիօրէն պիտի շարունակենք մեր ժողովրդի մէջ առատացնել հաւատը, յոյսն ու սէրը, ամրապնդել հաւատարմութիւնը մեր Սուրբ Եկեղեցու, ազգային-հոգևոր արժէքների նկատմամբ, որոնց շնորհիւ, ինչպէս դարերի հոլովոյթում, կարող պիտի լինենք յաղթահարել մեր կեանքի բոլոր դժուարութիւններն ու փորձութիւնները:

Հաւատարիմ միւռոնաբաշխ Սուրբ Էջմիածին՝ մեր որդիական գորակցութիւնն ենք յայտնում Հայոց Հովուապետին՝ Նորին Սրբութիւն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ փոթորկալի այս ժամանակներում, իբրև բարի և քաջ հովիւ, տիրունաշնորհ իմաստութեամբ, հանդարտութեամբ և մշտարթուն հոգով առաջնորդելու Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին և համայն հաւատաւոր մեր ժողովրդին դէպի խաղաղ ու ապահով հանգրուաններ:

Առ Աստուած ապաւինութեամբ հայցում ենք, որ Տէրը Իր Ամենախնամ Աջը տարածի աշխարհասփիւռ մեր ժողովրդի վրայ՝ խաղաղ և անվրդով պահելով մեր հայրենիքը, աներեր և պայծառ՝ Իր Սուրբ Եկեղեցին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ ՌԻԽՏԱԻՈՐՆԵՐԸ



Յուլիս 16-ին Վեհափառը ընդունեց ԱՄՆ Հայոց Արևելեան թեմի «Հայաստան ծառայութեան» ծրագրի երիտասարդ մասնակիցները, առաջնորդութեամբ Ֆիլատելֆիայի Սուրբ Երրորդութիւն եկեղեցւոյ հոգևոր հովիւ Արժանապատիւ Տէր Յակոբ քահանայ Գեորգեանի: Քահանայ հայրը տեղեկացուց, որ երիտասարդ հայորդիները Հայաստանի մէջ մասնակցած են համայնքային կամաւորական ծրագրերու, ինչպէս նաև այցելած Հայաստանի տարբեր սրբավայրեր՝ զօրացնելով իրենց հայրենաճանաչութիւնը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը գնահատեց

մասնակցութիւնը կամաւորական ծրագրերուն: Նաև գոհունակութիւն յայտնեց, որ ուխտաւոր երիտասարդները ամուր կը պահեն իրենց կապը Եկեղեցւոյ հետ՝ գիտակցութեամբ, որ հաւատարիմ մնալով ազգային արժէքներուն՝ կրնան անխաթար պահպանել իրենց ինքնութիւնը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ «ՀԲԸՄ ՖՈԿՈՒՄ» ԾՐԱԳՐԵՐՈՒ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԸ

Յուլիս 17-ին Վեհափառը ընդունեց «ՀԲԸՄ Ֆոկուս» ծրագրի մասնակիցները, ուղեկցութեամբ ՀԲԸՄ Հայաստանի նախագահ, ՀԲԸՄ Կեդրոնական վարչութեան անդամ Վազգէն Եագուպեանի: Ան տեղեկացուց, որ ՀԲԸՄ երիտասարդական «ՀԲԸՄ Ֆոկուս» ծրագիրը այս տարի առաջին անգամ տեղի կ'ունենայ Հայաստանի մէջ եւ կը համախմբէ շուրջ 4000 երիտասարդ հայ արհեստավարժեր աշխարհի տարբեր կողմերէն, նպատակ ունենալով ստեղծել համախոհներու ցանց, ընդլայնել անձնական ու մասնագիտական կապերը և ընդգրկել ՀԲԸՄը համաշխարհային գործունէութեան մէջ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձրօրէն գնահատեց ՀԲԸՄ-ի կողմէն իրականացուող նմանօրինակ ծրագրերը, որոնց շնորհիւ տարբեր երկիրներու մէջ բնակող հայորդիները հնարաւորութիւն կ'ունենան համատեղ ծրագրեր մշակելու ի նպաստ ՀԲԸՄի առաքելութեան արդիւնաւորման և ի պայծառութիւն հայրենիքի:

Նորին Սրբութիւնը վստահութիւն յայտնեց, որ հայրենիքէն ըստացած տպաւորութիւնները նոր ոգեշնչման աղբիւր կը դառնան



երիտասարդներուն համար՝ առաւել նախանձախնդիր ըլլալու ազգային արժէքներուն ու սրբութիւններուն և իրենց ներդրումը բերելու հայ կեանքին:

Վեհափառ Հայրապետը պատասխանեց նաև ներկաներու հարցերուն, որոնք կը վերաբերէին երիտասարդներու ներգրաւման եկեղեցական կեանքին մէջ, հոգևորականներու պատրաստութեան ու ծառայութեան, հայրենիքի առջև ծառացած մարտահրաւերներուն:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՅԴ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ և ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ 12-ՐԴ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Յուլիս 20-ին Վեհափառը ընդունեց Հայ Յեղափոխական Դաշնակցութեան երիտասարդական և ուսանողական 12-րդ Համահայկական բանակումի մասնակիցները, ուղեկցութեամբ ՀՅԴ Բիւրոյի անդամ Յովսէփ Տէր-Գեորգեանի և ՀՅԴ Հայաստանի ԳՄ անդամ Գեղամ Մանուկեանի:

Պրն Տէր-Գեորգեան ընդգծեց, որ ՀՅԴ Համահայկական բանակումի այս տարուան կարգախօսն է «**Պիտի վերադառնանք**», ինչը կարևոր ուղերձ է՝ վերադառնալու մեր արմատներուն ու մեր հոգևոր-ազգային արժէքներուն:

Այնուհետև Նորին Սրբութիւնը իր հայրական օրհնութիւնը բերաւ ներկաներուն, գնահատանք յայտնելով ՀՅԴ երիտասարդական և ուսանողական միութիւններու պատասխանատուներուն տարբեր երկիրներէ հայորդիներուն հայրենիքի մէջ պարբերաբար համախմբուելու համար, ինչը լաւագոյն առիթ է զօրացնելու անոնց ազգային-հոգևոր նկարագիրը և նուիրումն առ հայրենին:

Վեհափառ Հայրապետը, խօսելով ազգային ինքնութիւնը անխաթար պահելու և հոգևոր արժէքներով առաջնորդուելու հրամայականին մասին ընդգծեց, որ հայրենիքի նկատմամբ անսակարկ սիրով ու ազգային նկարագրով երիտասարդն է հայրենիքի ամրութիւնը և ազգի յարատևութիւնը:

Անդրադառնալով Արցախի բռնազավթման, հայրենազրկուած արցախահայութեան իրաւունքներու



պաշտպանութեան, գերիներու վերադարձման, Արցախի հայկական հոգևոր-մշակութային ժառանգութեան պահպանութեան խնդիրներուն ու երկրին մէջ տիրող դժուարին կացութեան՝ Հայոց Հայրապետը կարևորեց ազգային միաբանութիւնը՝ ի սէր հայրենիքի և յանուն համազգային շահերու ու առկայ մարտահրաւերներու յաղթահարման: Նորին Սրբութիւնը մաղթեց, որ ազգասիրութեան զօրեղ ոգին ու կամքը մշտապէս ուղեկից ըլլան հայ երիտասարդներուն, համընդհանուր ճիգերով զօրացեալ կերտելու հայրենքի անվտանգութիւնը, մեր ժողովուրդի խաղաղ ու բարօր կեանքը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԿՈՂՄԷ

Վարչապետ Նիկոլ Փաշինեանը Յուլիսի 20-ին հրապարակայնորեն յայտարարել է իր հետևորդների հետ Վաղարշապատ քաղաքի կենտրոնական հրապարակում հաւաք կազմակերպելու և Մայր Աթոռի նկատմամբ հերթական ոտնձգությունը նախաձեռնելու մասին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դատապարտում է յարձակում ու բռնություն հրահրելու այս փորձը, որը բացայայտ միջամտություն է Հայոց Եկեղեցու կեանքին և նրա ինքնակառավարմանը:

Յորդորում ենք իշխող քաղաքական ուժին դադարեցնել հակակեղեցական, անօրինական արշավը և լծուել երկրի առջև ծառացած լրջագոյն հիմնախնդիրների յաղթահարմանը: Միաժամանակ դիմում ենք պետության իրաւասու մարմիններին և պաշտօնեաներին ձեռնարկել բոլոր անհրաժեշտ և օրինական միջոցները՝ կանխարգելելու հակաօրինական այս միջոցառումը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը բարձրորեն գնահատում է բարեպաշտ մեր ժողովրդի սերն ու հաւատարմությունը հանդէպ Մայր Եկեղեցիին և նախանձախնդրությունը՝ պաշտպանելու համայն հայութեան հոգևոր կենտրոնն ու մեր նուիրական սրբությունները: Կոչ ենք անում մեր ժողովրդի զաւակներին չտրուել իշխանությունների սադրանքներին, պահպանել զգօնությունն ու ողջախոհությունը և հաւատով ու աղօթական ոգով համախմբուել առկայ փորձությունների դիմագրաւման համար:



ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

STATEMENT

On July 20, Prime Minister Nikol Pashinyan publicly announced his plan to convene a gathering with his supporters in the central square of Vagharshapat and to launch yet another assault on the Mother See.

The Mother See of Holy Etchmiadzin condemns this attempt to incite hostility and violence, which is a flagrant interference in the life of the Armenian Church and its self-governance.

We call on the ruling political force to halt its anti-church and unlawful campaign and to direct its efforts toward addressing the grave challenges confronting our country. At the same time, we appeal to the competent state authorities and officials to take all necessary and lawful measures to prevent this unlawful action.

The Mother See of Holy Etchmiadzin deeply cherishes the love and fidelity of our devout people toward the Mother Church and their zeal in safeguarding the spiritual center of the Armenian nation and our sacred heritage. We urge the faithful children of our people not to yield to the provocations of the authorities, but to remain vigilant and steadfast, and to unite in faith and a prayerful spirit in the face of present trials.

MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

ՄԱՅՐ ԱԹՈՒՄԻ ՄԷՋ ՏԵՂԻ ՌԻՆԵՑԱԻ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԴԱՄԲԱՐԱՆԻ և ՍՈՍՒՎԱՌՈՒԹԵԱՆ ԱՂՕԹԱՍՐԱՀԻ ԲԱՑՄԱՆ
ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Յուլիս 27-ին, նախագահությամբ Վեհափառ հօր, տեղի ունեցավ Մայր Տաճարի շրջափակին մեջ կառուցուած Կաթողիկոսական դամբարանի և մոմավառութեան աղօթասրահի բացման արարողութիւնը: Երկու շինութեանց բարերարներն են հոգելոյս Գառնիկ Եազուպեանը և տիկին Անահիտ Չաթալպաշեան-Եազուպեանը: Ճարտարապետներն են՝ Ասլան Մխիթարեանը և Հայկ Մկրտչեան: Շինարարութիւն՝ «Հորիզոն 95» ՍՊ Ընկերութեան կողմէ:



Արարողութեան ներկայ էին հայաստանեան և սփիւռքեան թեմերու առաջնորդներ, Մայր Աթոռ պաշտօնավարող եպիսկոպոսներ և միաբաններ, բարերարուհի և Եազուպեան ընտանիքի անդամներ ու հարազատներ, ինչպէս նաեւ, այս առիթով սփիւռքէն ու Հայաստանէն ժամանած ուխտաւորներ:

Արարողութիւնը սկսաւ Հայրապետական հանդիսաւոր թափօրով:

Յընթացս արարողութեան՝ շարականներու ընկերակցութեամբ, ջուրով և գինիով լուացուեցան աղօթասրահի երկու մատուռներու Սուրբ Մեղանները: Այնուհետև Սրբալոյս Միւռնով Ամենայն Հայոց Կաթողիկոսը օծեց զանոնք, անուանակոչելով մատուռները հայոց առաջին լուսաւորիչներ Սուրբ Թադէոս և Սուրբ Բարդուղիմէոս առաքեալներու անուններով: Այս առիթով մատուռներուն մեջ զետեղուեցան նաև առաքեալներու մասունքներ:

Վեհափառը իր հայրական պատգամը փոխանցեց ներկաներուն, գոհութիւն յայտնելով Աստուծոյ, որ Սուրբ Էջմիածնի մէջ, հաւատքի զօրացման նոր սրբատեղի մը բարձրացաւ:

«Հայրապետներու շիրիմներու ամփոփման համար պանթէոն կառուցելու այսպիսի նախաձեռնութիւն ծրագրուած էր տակաւին 1955 թուականին՝ Վազգէն Ա-ի օրոք: Մեզ համար մեծ ուրախութիւն եղաւ, որ



նախապէս տեղեակ չըլլալով այս նախաձեռնութեան՝ Մենք նոյնպէս մտայղացումը ունեցանք Կաթողիկոսական դամբարան հաստատելու Սուրբ Էջմիածնի մէջ: Փառք Աստծոյ, որ մեծանուն բարերար տիար Գառնիկ Եազուպեանի և իր ազնիւ կողակիցի՝ տիկին Անահիտի հովանաւորութեամբ կեանքի կոչուեցաւ այս ձեռնարկումը:

...Դամբարանը զալիք սերունդներուն իւրովի պիտի յիշեցնէ Ամենայն Հայոց Կաթողիկոսներու հոգեխնամ առաքելութեան մասին: Անոնց ծառայութիւնը լի է գոհողութեամբ, Քրիստոսապատգամ սիրոյ, արդարութեան և ճշմարտութեան

քարոզչութեամբ, բայց նաև հայրական յորդորով ու քաջալերութեամբ՝ ապրելու և գործելու առ Աստուած հաւատով յանուն ազգի ու հայրենեաց, ըսաւ Վեհափառը:

Դիմելով ներկաներուն՝ Նորին Սրբութիւնը ընդգծեց, որ մեր օրերուն, երբ տարբեր կեղծ գաղափարախօսութիւններով կը խաթարուի մեր արժեհամակարգը, կը նենգափոխուին հոգևոր ընկալումները, այսպիսի եկեղեցական շինութիւնները, սրբավայրերն ու ուխտատեղիները իրենց կրօնական և ծիսական կարևոր նշանակութեամբ հաւատքի գորացման, հոգիի փրկութեան և աստուածահաճոյ կեանքի ամրապնդման օրհնաբեր օճախներ են: «Այս կառոյցը, արդարև, սոսկ քարեղէն շինուածք չէ, ան աղօթքի տուն է, հաւատացեալներու ապաւինութեան վայր՝ Սուրբ Թադէոս և Սուրբ Բարդուղիմէոս առաքեալներու մատուռներով, ուր պաշտամունքային արարողութիւններ պիտի մատուցուին, և հաւատացեալները իրենց սրտառուչ աղօթքը պիտի վերառաքեն Տիրոջ: Այսպիսի օրհնեալ վայրի մէջ հաւատացեալին հետ կը հանդիպին ժամանակն ու յաւերժութիւնը, երկնաւորն ու երկրաւորը», - նշեց Հայոց Հայրապետը: Այս գովարժան առիթով, Նորին Սրբութիւնը մեծազնիւ տիկին Անահիտ Զաթալպաշեան-Եագուպեանին շնորհեց «Սուրբ Էջմիածին» բարձրագոյն շքանշան, իսկ որդուն՝ Արամ Եագուպեանին՝ «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» պատույ բարձրագոյն շքանշան:

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՍՏԻ ՄԷՋ

Յուլիս 27-ին, Մայր Տաճարին մէջ, հանդիսապետութեամբ Վեհափառ Հօր, մատուցուեցաւ Սուրբ և Անմահ Պատարագ: Պատարագիչն էր Դիւանապետ Գերշ. Տ. Արշակ Արք. Խաչատրեանը, որ նաեւ քարոզեց Պայծառակերպութեան տօնին խորհուրդին մասին:

... «Պայծառակերպուած Յիսուս շարունակում է մեզ դուրս բերել մեղքի և ապականութեան տիրումից, և Նրա լուսաւոր զգեստների քղանցքներին կպած մենք շարունակում ենք ձգտել սրբութեան, փրկութեան և անապականութեան:

Ամպամած ու մոռյլ է այսօր մեր կեանքը՝ լի մտահոգութիւններով ու մարտահրաւերներով՝ ծա՛նր մարտահրաւերներով, որոնք մթազնում են կարծեք ապագայի լոյսը: Մշուշուած են հորիզոնները հայոց կեանքի: Մթնոլորտը շիկացած է թշնամանքով, ատելութեամբ և հակառակութիւններով: շփոթմունքի և խուճապի մէջ, վախերի ու տազնապնների ազդեցութեան տակ գետնամած ու կծկուած ենք մենք, ինչպէս առաքեալները: Բայց մեր յուզումն ու երկիւղը Յիսուսի պայծառակերպուած դէմքից չէ, այլ մեր պայծառակերպուելու կամքի տկարութիւնից: Աղօթքը նուազել է մեր կեանքին մէջ, խօսքն ու վազքը շատացել: Մենք խօսքից առաւել պէտք ունենք լռութեան, վազքից առաւել՝ խոկումի և խորհրդածութեան: Խղճի ազատութիւն փնտռելուց առաջ պէտք ունենք խղճի, մտքի ազատութիւն փնտռելուց առաջ պէտք ունենք մտքի: Թէ չունես խիղճ և չունես միտք՝ ազատութիւնը կը դառնայ բեռ ու փորձութիւն:



Խօսելուց և գործելուց առաջ պէտք է աղօթել: Լաւ է լռել և անշարժանալ, քան թէ խօսել և գործել առանց աղօթքի, առանց խորհելու: Պայծառակերպութիւնն աղօթքի արդիւնքն է՝ բարի խօսքի և բարի գործի երաշխիքը:... Յիսուսի պայծառակերպուած դէմքը, արեգակի նման բոցավառուող աչքերը մեր առջև բացում են մի հրաշալի ճանապարհ՝ հանրային հաշտութեան և համագգային համերաշխութեան ճանապարհ, փրկութեան և ազատագրութեան ճանապարհ: ...«Թող արևները լուսաւորեն համագգային մեր կեանքի մթին խորշերը, թող պատերազմի կորուստներից ու ցաւերից բեկուած մեր ժողովուրդն ամրանայ յոյսով ու հաւատքով, թող արժանապատուութիւնն ու պատուախնդրութիւնը ոռոգեն մեր յաղթական ճանապարհը և թող Տիրոջ արդար ձեռքը ծանրանայ նրանց վրայ, ովքեր մարտնչում են

Աստուծոյ և Իր Սուրբ Եկեղեցու դէմ, թող ծանրանայ նրանց վրայ, ովքեր հարուածում են հիմերին հայոց պետութեան և փորձում ոչնչացնել հայոց ինքնութիւնը: Թող նրանց դաժան վախճանը դառնայ նախազգուշացում սերունդներին, որպէսզի ոչ ոք այլևս չյանդգնի խաւարի գործերով կործանել այն, ինչ Աստուած Ինքն է օրհնել», - նշեց Սրբազանը՝ մաղթելով, որ պայծառակերպուած Յիսուսի լոյսով խաղաղ մնայ Հայոց աշխարհը, անյաղթահարելի՝ Հայոց Պետութիւնը ու անասան՝ Հայոց Եկեղեցին՝ Սուրբ Էջմիածնի հայրապետական աստուածահաստատ իր Աթոռով և համերաշխ ու արժանապատիւ մեր ողջ ժողովուրդը ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի:

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՕՐՀՆԵՑ Հ.Մ.Ը.Մ.
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 12-ԴՆ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ**



Յուլիս 29-ին ուխտաւորաբար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելեցին Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան (Հ.Մ.Ը.Մ.) 12-րդ մարզախաղերու շուրջ 850 սկաուտներ՝ ուղեկցութեամբ Կեդրոնական վարչութեան անդամներու:

Այս առիթով Վեհափառի հանդիսապետութեամբ Միածնաեջ Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ մարզախաղերու մասնակիցներուն օրհնութեան կարգ: Արարողութեան աւարտին, Նորին Սրբութիւնը իր հայրական պատգամն ու բարեմաղթանքները փոխանցեց հայորդիներուն՝ գոհունակութիւն յայտ-

նելով, որ աւանդական դարձած մարզախաղերու առիթով աշխարհի տարբեր կողմերէն համախմբուած են հայրենիքի մէջ՝ մրցապայքարի մէջ դրսևորելու իրենց հմտութիւններն ու կարողութիւնները, միաժամանակ ճանաչելու և բարեկամանալու իրարու հետ:

«Խիստ կարևոր է երիտասարդներիդ մասնակցութիւնը նման վարժանքներին ու մրցոյթներին, որոնք միջոց են զօրանալու մարմնով և հետևողական աշխատանքով, տոկունութեամբ ու ոգու ամրութեամբ արձանագրելու ապագայ յաղթանակներ: Վարժանքներն ու մրցոյթները միջոց են նաև զօրանալու հոգով՝ Աստծուն ապաւինած դիմակայելու բոլոր փորձութիւններին ու դժուարութիւններին և աննկուն ընթանալու դէպի յաղթութիւն: Ուստի, պարբերաբար կազմակերպուող նման միջոցառումները իրենց նշանակութեամբ և առաքելութեամբ աւելին են, քան սոսկ մարզական մրցոյթներ», - նշեց Հայոց Հայրապետը:

Անդրադառնալով հայ ժողովուրդի և հայրենիքի առջև ծառացած բազմաթիւ դժուարութիւններուն ու խնդիրներուն՝ Նորին Սրբութիւնը ընդգծեց, որ արցախեան պատերազմի հետեւանքով, հայրենի երկիրը տակաւին կը դիմագրաւէ լրջագոյն անվտանգային



մարտահրաւերներ, կարիքի մէջ է տեղահանուած արցախահայութիւնը, ներհասարակական կեանքի մէջ կը խորանան անհամերաշխութիւնն ու անհանդուրժողութիւնը, գերակշռող են և խորապէս անհանգստացնող ապագայի անորոշութեան զգացումները:

«Հաւատում ենք, որ արդարութիւնը պիտի յաղթանակի, և համախումբ ջանքերով պիտի թոյլ չտանք, որ մեր կեանքում գերակայեն եղբայրատեացութիւնը, կեղծիքն ու չարագործութիւնները և խաթարուի ազգային միասնականութիւնը: Հայրենիքի համար այս բարդագոյն իրավիճակում անգամ պէտք չէ յուսահատուել և հիասթափութիւն ապրել: Դուք, որ ծնուել ու հասակ էք առել աշխարհի տարբեր երկրներում, ինչպէս և Հայաստանում ու Արցախում, պատասխանատուութիւն ունէք մեր ժողովրդի լուսեղէն գալիքի կերտման գործում՝ ձեր ուժերն ու կարողութիւնները ծառայեցնելու ի սէր ազգի ու հայրենիքի: Նաև դուք առաքելութիւն ունէք ազգային միաբանութիւնն ամրապնդելու, Հայաստան-



Սփիւռք կապերն անսասան պահպանելու և նորովի արդիւնաւորելու: Այս յանձնառութեան բարեյաջող իրագործման համար առանձնակի կարևոր են ձեր հայրենաճանաչութիւնը, ազգային ինքնագիտակցութիւնը, հայոց պետականութեան ամրապնդման կամքն ու վճռականութիւնը և դարերով նուիրագործուած մեր արժեհամակարգի անխաթար պահպանումը: Դուք ապագան էք մեր հայրենիքի ու ազգի և երաշխիքը հայոց յարատւութեան, համընդհանուր մեր իղձերի ու երազանքների իրականացման: Ձեր այցը հայրենիք կարևոր քաջալերանք է հայրենաբնակ

մեր ժողովրդի, ձեզ հասակակից ձեր քոյրերի ու եղբայրների համար», - ըսաւ Հայոց Հովուապետը, յորդորելով երիտասարդ սկաւտները իրենց հոգիին մէջ մշտապառ պահել հայրենեաց սէրը, ուժ առնել հարազատ հողէն և բազմադարեայ սրբութիւններէն ու ներշնչուիլ մեր հայրերու հաւատաշէն գործերէն, հաւատարիմ մնալ ազգային-հոգևոր արժէքներուն, զօրացնել իրենց սրտերուն մէջ որդիական նուիրումն առ հայրենին, Սուրբ Եկեղեցին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Իր խօսքին մէջ Նորին Սրբութիւնը պատգամեց ուխատորներուն նաև անխախտ պահել իրենց ազգային ինքնութիւնը, հպարտանալ Հայոց պատմութեամբ, նախնեաց կերտած ժառանգութեամբ և յանուն արդարութեան, յանուն անկախ կեանքի հայ ժողովուրդի մղած անդուլ պայքարի հզօր ոգիով:

«Միշտ արիասիրտ կանգնէք ի պաշտպանութիւն մեր ժողովրդի իրաւունքների և նրա արդար դատի: Հայաստանում ձեր մեկտեղումի այս նշանակալի և անմոռանալի օրերը թող դառնան առիթ ոգեշնչումի ու



յանձնառութեան՝ ձեր գիտելիքներով ու շնորհներով բոլորանուէր օգտակար ծառայութիւն բերելու ազգային կեանքում և նորանոր յաջողութիւններ արձանագրելու՝ ի շահ մեր ժողովրդի և հայրենիքի», - յորդորեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ իր գնահատանքը բերելով մարգախաղերու կազմակերպիչներուն և բոլոր պատասխանատուներուն իրենց նուիրեալ և ազգօգուտ ծառայութեան համար:

Diocesan News

With a good number in attendance, the youth ended the night in fellowship at the Diocesan Centre, sharing a meaningful conversation with His Grace about our Church, our roots, and the role of youth in faith.

Sunday 6 July – Organised by the Hamazkaine Literary and Cultural Committee, a literary evening dedicated to the incomparable poet Hovhannes Shiraz, “Our Shiraz,” as the Armenian people have called and accepted him, was held in the Edgarian Hall. His Grace, Bishop Vardan Navasardyan was invited by Hamazkaine and participated in the event. His Grace had experience working with this committee two decades ago, as noted by the host of the day and the Chairperson of the committee Mrs Lilik Kotoyan. With the support of His Grace who was Father Vardan at that time, the same committee organised another literary evening dedicated to Komitas. Mrs Kotoyan reflected on the reality that Shiraz was never allowed to travel to the diaspora. However, the Diaspora knew and appreciated him more than the Homeland, which was a Soviet state at that time. Before inviting the speaker of the day Reverend Father Miuron Avedisian to the stage, Mrs Kotoyan invited all those who wished to recite or read from Shiraz's poems. And a considerable number of book lovers rose to the podium and read and recited Shiraz creating the atmosphere of a real literary evening. Thus, Silva Pamboukian recited "The Heart of a Woman," Nanor Churukian presented, written in a poetic style, Shiraz's fables "The Fox and the Hedgehog" and "The Snake and the Bee," Shushan Der Sahakian recited "My Holy Homeland," Romela Hacopian

Saturday 5 July – Presided by His Grace Bishop Navasardyan and organised by ACYA Sydney, youth gathered to celebrate a Youth Divine Liturgy in prayer and reverence as they commemorated the relic of St Gregory the Illuminator and lifted their hearts for the homeland.



"The Mass of the Above," Azniv Inglizian "The Armenian Language," Keghanoush Mardoyan "My Childhood," Suzy Sarafian "Testament," Varteni Khoudesian "I Wanted to Sit on a Stone," Garineh Sayatyan "I Lost My Only Sister," Zarineh Khorenyan "The Call of Karabakh," Shushan Poghosian "In My Dream".



After presenting a brief video about Shiraz's life, Father Avedisian highlighted the value of the fearless and courageous Shiraz as a person and as an Armenian. With various examples, Father Avedisian highlighted to the audience the different poetic styles, prose and letters of Shiraz, and spotted in all the writings the poet as a courageous defender of the preservation of the Armenian identity. Shiraz's unblemished love for his mother and motherland appears like a red thread in his literature. Father Avedisian conducted a multi-faceted study. He spoke about Shiraz, told about interesting episodes of his life, and said that he was convinced that the Soviet regime would one day bring Mount Ararat back from Turkey. The Reverend informed that Shiraz's literature had been translated into more than 60 languages. He spoke about the hardships of his orphanhood, about writing poems from a young age, and about his universal value. During the lecture, Father Miuron sang Shiraz's songs "Song About Wine (A glass Is Good...)" and "A Cloud Has Covered the Moon," inspiring the audience who joined in and formed an unexpected choir.

Father Avedisian's lecture was met with thunderous applause which was an expression of appreciation for the splendid work he had done to present Shiraz in its entirety.

The closing address was delivered by the Primate. He expressed his gratitude to the Reverend Father for his extensive "heart-enriching" study and analysis which brought to life the two important values dedicated to the Shiraz testament: Mother and Motherland. Elaborating, he said, "These two values are alive in a person at any age. We often receive advice from our deceased mothers and enjoy their irreplaceable presence."

Bishop Navasardyan also touched on the sad reality that the spiritual perception of the Motherland has begun to decline among us, perhaps our ability to transmit true values to generations has weakened. He reflected, saying that we are not claimants in relation to the loss of the Homeland, but we only talk about it. Therefore, he found it important to organise such evenings frequently "so that the national connection to our second parent, the Homeland, is renewed among us."

The Primate conveyed the message of Shiraz that Armenia and the Diaspora should be connected to each other with a golden bridge. And according to him, "that golden bridge is those golden Armenians who make this a living bridge" between Armenians of Armenia and those in the Diaspora. He wished we could face all challenges with spiritual weapons with the intention of achieving a united victory.

The event was closed with these meaningful and patriotic words and Bishop's closing prayers.





with warm hospitality on the special occasion of his inaugural visit. Bishop Navasardyan and the Chairman, together with the Directors discussed potential ways to further develop this community institution in the future.

Wednesday 9 July - His Grace Bishop Vardan Navasardyan, accompanied by the Chairman of the Diocesan Council Mr Sarkis Der Bedrossian, Reverend Father Ashot Abrahamyan and Deacon Boghos Keleshian visited the Alexander Armenian Aged Care Home in Sydney. They were welcomed by the Board members and staff. His Grace delivered a spiritual message to the elderly and at the end Holy Communion was distributed to those present by Father Ashot. Then, a tour of the new building took place as well as individual visits with the elderly residents. The Board Directors honoured the Primate and his companions



Wednesday 9 July – The monthly Youth Prayer Service and Bible Study was held at the Holy Resurrection Armenian Church presided by Bishop Navasardyan, after which the attendees met with the Primate in the Diocesan Centre.

Saturday 12 July – Bishop Navasardyan presided the traditional Christmas in July event organised by the Ararat Cultural Centre in the presence of about 100 participants. The members of the Ararat Centre's Ladies' Auxiliary Committee meticulously considered every detail to make the evening special. The event was truly unique. His Grace expressed his gratitude to the organisers as well as to all the friends of the Ararat Centre who encouraged and supported the event with their presence which made it a success. The editorial staff of Paros congratulates the Ararat Centre Committee and in particular the Ladies' Auxiliary Committee, for the triumph of this event.

His Grace Bishop Vardan Navasardyan continued to receive representatives of community organisations for courtesy welcome visits.

Saturday 12 July – In the afternoon, the Bishop received the newly elected members of the Armenian Relief Society (ARS) Regional Committee, headed by Chairperson Mrs Nina Kaprielian. The group was also joined by ARS Central Board member Mrs Nora Sevagian from Sydney.

On **Sunday 13 July**, in the afternoon, His Grace received representatives of the Australian Branch of the Democratic Liberal Party and the Tekeyan Cultural Association accompanied by their wives, headed by the Chairman Mr Vahe Artinian.

On **Monday 14 July**, in the evening, His Grace received representatives of the Australian Executive Committee of the Social Democrat Hunchakian Party, led by the Chairman Mr Sebouh Kalpakian.

In the evening of **Tuesday 15 July**, His Grace received representatives of the Regional Committee of the Armenian Revolutionary Federation Australia Chapter, led by Chairman Mr Vicken Kortian.

In the evening of **Wednesday 16 July**, His Grace received representatives of the AGBU Sydney Chapter, led by the Chairman, Mr Mihran Lepejian, accompanied by the Chairman of the Board of Trustees of Alexander School, the principal of Alec Manougian Saturday School, and the Editor-in-Chief of Mioutiune Monthly.



All meetings were attended by priests and representatives of the Diocesan Council. In a warm and friendly atmosphere, local and national issues were discussed, as well as future community programs. The meetings were hosted by the Arachnortaran Ladies Guild.

In the morning of **Thursday 17 July**, His Grace received Reverend Dr Krikor Youmshajekian President and Executive Director of the Armenian Missionary Association of Australia in his office.

Thursday 24 July – Bishop Navasardyan received representatives of the Armenian Evangelical Community, led by the Pastor of the Armenian Evangelical Church of Sydney, Reverend Hagop Sarkissian. In a warm atmosphere of

brotherhood and cooperation, the representatives of the Evangelical Church welcomed and wished His Grace good health and success in his future church and community service.

